Լսեք Իմ կանչը և նախապատրաստվեք Իմ Սուրբ Հոգու հեղմանը

Երեքշաբթի, 1 մայիսի, 2012թ, երեկոյան ժ 08:00

Իմ սիրելի աղջիկ, ձեր բոլորի հանդեպ Իմ սերը նշանակում է, որ Ես հիմա մեկ անգամ ևս հեղելու եմ Իմ Սուրբ Հոգին մարդկության վրա՝ հրապուրելու նրանց, որ բացեն իրենց սրտերը:
Շատ շուտով շատ հոգիներ մտքով, մարմնով և հոգով կզգան Իմ Սուրբ Հոգու զորությունը հեղված իրենց վրա:
Սա էական է՝ Աստծո բոլոր զավակներին ճշմարտության հանդեպ արթնացնելու համար:
Ոմանք հիմա աշխարհը կտեսնեն այլ ձևով:
Այդ ժամանակ նրանք կսկսեն հարցականի տակ դնել ամեն ինչ: Այլևս նրանք չեն ցանկանա մնալ սրտուկներ այն տերերին, ում միակ նպատակը նրանց վերահսկելն է սեփական շահի համար:
Ոչ մեկն ի վիճակի չի լինի անտեսել Սուրբ Հոգու այդ ձգումը:
Ողջ երկինքը սպասում է, որ լուսավորման պահը ստեղծի մի նոր արշալույս, մի նոր սկիզբ:
Ստերը, որոնց դուք բախվում եք, թաքցնում են մի մեծ պլան, ստեղծված մի համաշխարհային միության կողմից, որի նպատակն է վերահսկել ձեր բոլոր երկրները:
Եթե ստիպեք ձեր երկրին ապավինել հսկաներին՝ ձեր ընտանիքները կերակրելու համար, դուք կդառնաք ստրուկներ: Նրանք արդեն վերցնում են ձեր ունեցած ամեն ինչը, բայց դուք կույր եք դրա հանդեպ:
Հիմա, Սուրբ Հոգու ընծայով, միլիոնավոր մարդիկ կտեսնեն այդ խաբեության դիմակի միջից և կդիմադրեն այդ չար մասոնական վերահսկող խմբերին:
Այս ընծան ձեզ կտա այն սպառազինությունը, որի կարիքն ունեք այդ բանակին մի կողմ նետել ձեր ոչնչացման արահետից:
Լսեք Իմ կանչը և նախապատրաստվեք Իմ Սուրբ Հոգու հեղմանը:
Ձեր սիրող Հիսուս

ՍՈւրբ Հոգին կիջնի այս կիրակի. Երկրորդ դուրս հեղաւմը Սուրբ Հոգու զորությամբ

Ուրբաթ, 4 մայիսի, 2012թ, երեկոյան ժ 09:05

Իմ սիրելի աղջիկ, երբ զգում ես, որ այս առաքելությունը դժվար է համոզելու համար Աստծո բոլոր զավակներին ընդունելու Երկրորդ Գալուստը և որ այն ընդունվի որպես բարի լուր Աստծո բոլոր զավակների համար, հիշիր հետևյալը:
Ճիշտ այնպես ինչպես յուրաքանչյուր մարդ ստեղծված է Աստծո՝ Իմ Հավիտենական Հոր պատկերով, այդպես էլ յուրաքանչյուր հոգու միջով ինչ-որ ձևով փայլում է Իմ Հոր Լույսը:
Նայիր յուրաքանչյուրի դեմքին, ում հանդիպում ես, և կտեսնես Հայր Աստծո մի նշույլ:

Դա կարող է լինել պարզապես մի հայացք, մի ժպիտ, մի ժեստ կամ քնքշություն, որ առկա է:
Բարին կա յուրաքանչյուրի մեջ, նույնիսկ՝ կարծրացած մեղավորների: Ոմանց մոտ այդ բարությունն ամբողջապես պարուրող է և մագնիսի պես մարդկանց ձգում է դեպի նա, ով օրհնված է այդ ընծայով: Ուրիշների մոտ այն սոսկ մի աղոտ առկայծում է, բայց միևնույն է՝ կա:
Երբ նայում ես մեկի աչքերի մեջ, ում վերաբուրմունքը ուրիշնորի հանդեպ դաժան է, կարող ես դեռևս տեսնել հույսի մի ճառագայթ, Աստծո Լույսի առկայության պատճառով:
Աստծո զավակների հոգիներում գտնվող Լույսն է, որ վերավառման կարիք ունի Իմ սիրո և հույսի պատգամների միջոցով: Որքան այդ Լույսն ուժեղ է, այնքան մարդն ավելի մաքրագործված է:
Որքան շատ լինեն նԱստծո Լույսով մաքրագործված մարդիկ, այնքան երկիրն ավելի մաքրագործված կլինի:
Մինչ հավատացողների հոգիներում Աստծո Լույսն ավելի ուժեղ է դառնում, ապա չարի գործը կսպառվի, որովհետև խավարը չի կարող բնակվել Լույսի մեջ:
Ահա թե ինչու Սուրբ Հոգու մեկ այլ դուրսհեղում է շնորհվում ողջ աշխարհին հիմա: 2011թ. մայիսի 10-ից ի վեր սա Սուրբ Հոգու երկրորդ հեղումն է:
Այն նախորդում է Իմ Մեծ Աստվածային Գթասրտությանը և կվստահեցնի որ Լուսյը ստեղծի մի նոր հասկացողություն հավատացողների հոգիների մեջ:
Այս Սուրբ Հոգին կիջնի ողջ աշխարհի վրա այս կիրակի՝ 2012թ. մայիսի 6-ին:
Շատերը կզգան խաղաղություն և սեր: **Ես կոչ եմ անում բոլորին աղոթել այս ընծայի համար՝ թաթախելու իրենց հոգիները,** որպեսզի զգան Աստծո Սերը և պատասխանեն Նրա կանչին:
Խաչակրաց արշավանքի աղոթք (51) **Սուրբ Հոգու ընծայի համար.**

Ոհ, արի Սուրբ Հոգի
Հեղիր Սիրո, Իմաստության և Գիտելիքի Քո Ընծան
Իմ խոնարհ հոգու վրա
Լցրու ինձ Ճշմարտության Լույսով
Որպեսզի կարողանամ զանազանել Աստծո ճշմարտությունը
Սատանայի և նրա հրեշտակների կողմից տարածած ստերից
Օգնիր ինձ բռնել ջահը և տարածել
Հասկացողության բոցը բոլոր նրանց
Ում կհանդիպեմ Մեր Տեր Քրիստոսի միջոցով: Ամեն:

Գնացեք Սիրով, Լույսով և Խաղաղությամբ:
Հանգստացեք և թույլ տվեք Իմ Սուրբ Հոգուն իջնել ձեզ վրա:
Ես սիրում եմ ձեզ:
Ձեր Թանկագին Հիսուս

Հայր Աստված. Ընդունեք Իմ Սուրբ Հոգին զարմանքով և շնորհակալությամբ

Շաբաթ, 5 մայիսի, 2012թ, կեսօրվա ժ.12:00

Աղջիկս, որքան մեծ է այն օրը, երբ Սուրբ Հոգին՝ Իմ Սիրո Լույսը, կթափվի երկրի վրա:
Սա մի չափազանց յուրահատուկ ընծա է: Այն կբացի շատերի սրտերը և շատ հոգիների կնախապատրաստի Նախազգուշացմանը:
Իմ Սերը սահման չունի:
Չկա ոչ մի մարդ, կին կամ երեխա, ում Ես կբացառեմ յուրաքանչյուրին Իմ Բազուկների մեջ ամուր պահելու ցանկությունը: Ոչ մի մեղավոր դուրս չի թողնվում:
Իմ ընծաները մարդկությանը՝ առատաձեռն են, և Ես կշարունակեմ դուրս հեղել Իմ Ընծաները ի պատասխան նրանց, ովքեր ասում են քեզ տրված Խաչակրաց արշավանքի աղոթքները, աղջիկս:
Այդ աղոթքները երկնքից են և չեն եկել մարդու գրչից:
Դրանք այս ժամանակների համար են և հզոր զենք են հալածանքների դեմ:
Այդ աղոթքները լսվում են ամեն անգամ, երբ դրանք գալիս են ձեր շուրթերից, զավակներս:
Դրանք ձեզ մեծ պարգևներ կբերեն:
Ընդունեք Իմ Սուրբ Հոգին զարմանքով և շնորհակալությամբ:
Դա մի հրաշք է և ուղարկվում է ձեզանից յուրաքանչյուրին բոլորի հանդեպ ունեցած Իմ Սիրով:
Գնացեք հիմա խաղաղությամբ և սիրով:

Ձեր Հայր
Աստված Ամենաբարձրյալ

Իմ ժամանակակից առաքյալներին մի ահռելի առաքելություն է տրվում

Կիրակի, 6 մայիսի, 2012թ, առավոտյան ժ 10:00

Իմ սիրելի աղջիկ, Աստծո զավակներից շատերը հավատում են, թե Իմ Հոր կողմից սիրված են նրանք, ովքեր ապրում են սուրբ կյանքով:
Ճշմարտությունն այն է, որ այդ հոգիները, չնայած սուրբ են և նվիրված, պետք է աշխատեն այլ հոգիների փրկության համար:
Մյուս հոգիներն այն շարքային մարդիկ, կանայք և երեխաներն են, ովքեր ապրում են զբաղված կյանքով, քիչ ժամանակ անցկացնելով աղոթքի մեջ:
Շատերը չեն աղոթում կամ հաղորդակցվում Ինձ հետ: Ոմանք չեն հավատում Աստծուն: Ոմանք հավատում են: Այդ հոգիներից շատերն ապրում են լավ կյանքով: Նրանք ուրիշների հետ սրտի բարությամբ և սիրով են վարվում: Նրանք ուրիշների կարիքները դնում են իրենց սեփական կարիքներից առաջ: Նրանք բարեգործություն են անում: Նրանք սիրում են միմյանց: Բայց նրանք չեն գնում եկեղեցի, չեն ընդունում Խորհուրդները կամ այն, որ Ես՝ Հիսուս Քրիստոսը, գոյություն ունեմ:
Ուստի կմտածես, թե նրանք կորած հոգիներ են: Ճշմարիտ, նրանք կորած չեն:

Նրանք Աստծո զավակներն են, և Նրա Լույսը փայլում է նրանց միջոցով: Նրանք դատապարտված չեն: Նրանք սիրված են:
Ժամանակի ընթացքում, երբ նրանց ցույց տրվի Իմ գոյության ապացույցը, նրանք անմիջապես կգրկեն Ինձ:
Միայն այն հոգիներն են կորած, ովքեր գիտակցում են Իմ Հոր հանդեպ իրենց (հասցրած) վիրավորանքները և անուշ անում անբարոյական ու չար մեղքերի հաճույքները:
Նրանք, ովքեր չեն կարող ապրել առանց մահացու մեղքեր կատարելու և ում հոգիներն այնքան սևացած են Սատանայի կողմից բռնված լինելու պատճառով, նրանք են, որ կարիք ունեն դուրս պրծնելու այդ սարսափելի խավարից, նրանք հարկը եղածի չափ ուժեղ չեն լինի այդ անելու համար:
Նրանց համար գրեթե անհնար է Իմ օգնությունը փնտրել: Նրանք կարող են փրկվել միայն Իմ սուրբ և նվիրված հետևորդների աղոթքների միջոցով:
Իմ ժամանակակից առաքյալներին տրվում է մի ահռելի, բայց ավելի հրատապ առաքելություն հավասար նրան, որ տրվեց Իմ առաքյալներին երբ Ես բարձրացա Երկինք:
Ձեր դերը, Իմ հետևորդներ, ձեր աղոթքների միջոցով այդ հոգիներին Իմ Նոր Դրախտի համար նախապատրաստելն է: Աղոթքները կարող են դարձի բերել նրանց:
Իմ Գթասրտությունն այնքան մեծ է, որ Ես կներեմ այդպիսի մեղավորներին Իմ մյուս հավատարիմ ծառաների առատաձեռնության միջոցով, նրանց տառապանքի և աղոթքների միջոցով:
Երբեք մի մոռացեք ձեր աղոթքների ուժը: Այդ ուժը մի ընծա է՝ տրված ձեզ, որպեսզի կարողանաք փրկել ձեր եղբայրների և քույրերի հոգիները:
Հիշեք, Իմ Հավիտենական Հայրը սիրում է բոլոր մեղավորներին: Բայց մեծ ուրախություն է լինում, և ուրախության արցունքներ, յուրաքանչյուր սևացած և կորած մեղավորի համար, ով փրկվում է դժոխքի կրակներից:

Ձեր սիրող Հիսուս

Ուժեղ է այն ցավն ու հալածանքը, որն Ինձ հասցնում են այն աղանդները, որոնք գաղտնի կերպով աշխատում են գլխիվայր շրջել Մայր Աթոռը

Կիրակի, 6 մայիսի, 2012թ, երեկոյան ժ. 07:30

Իմ սիրելի աղջիկ, Ես գալիս եմ խնդրելու Իմ հետևորդներին՝ թեթևացնել Իմ տառապանքը:
Ուժեղ է այն ցավն ու հալածանքը, որն Ինձ հասցնում են այն աղանդները, որոնք գաղտնի կերպով աշխատում են գլխիվայր շրջել Մայր Աթոռը:
Որքան են նրանք վիրավորում Ինձ այդպես:
Դժվար է տանել Իմ դեմ նրանց ծրագրի խաբեությունն եւ դաժանությունը:
Ես դողում եմ, երբ տեսնում եմ այն բացարձակ ատելությունը, որ նրանք ունեն Իմ հանդեպ:

Սատանան գողացել է նրանց հոգիները, նրանց մտքերը, նրանգ ոգիներն ու մարմինները: Նրանք դեռևս Աստծո զավակներն են, բայց ոչինչ չեն ուզում ունենալ Իմ Հոր հետ:
Նրանց պլանները հիմա տեղի են ունենում ձեր աչքերի առջև, ներառյալ Իմ սրբազան սպասավորների աչքերի առջև, չնայած դրան, նրանք չեն կարողանում տեսնել դա: Այն չար ուղիները, որոնցով նրանք թաքնվում են և սակայն կարողանում են ղեկավարել Իմ Եկեղեցին, կոտրում են Իմ սիրտը:
Ես ամեն ինչ կանեմ նրանց կանգնեցնելու համար, բայց նրանց հոգիներն այնքան սև են:
Քո տառապանքը, աղջիկս, կօգտագործվի օգնելու փրել նրանց հոգիները, ովքեր դեռևս իրենց ներսում կունենան սիրո մի կայծ, և ովքեր կպատասխանեն Իմ Կանչին:
Ես կոչ եմ անում աղոթել այդ հոգիների համար, որոնք աշխատում են մի նվիրված բանակի պես, ում սրտերում քիչ սեր կա Աստծո հանդեպ:
Նրանց հոգիներում դեռևս լույս կա՝ Իմ Հոր Աստվածային Լույսը: Միայն աղոթքն ու տառապանքը կարող են օգնել նրանց:
Նրանք չեն պաշտպանի և չեն կարող պաշտպանել Իմ Եկեղեցին, քանի որ Ես Եկեղեցին եմ:
Դուք, Իմ հետևորդներ, Եկեղեցին եք: Նրանք չեն կարող կռվել լույսի մեջ գտնվողների հետ, քանի որ լույսը կկուրացնի նրանց:
Ժամանակի ընթացքում նրանք կհասկանան, որ միայն վայրկյաններ ունեն իրենց վերջնական ընտրությունը կատարելու համար:
Աղոթեք, որ նրանք ընդունեն Իմ Գթասրտության Ձեռքը, փոխանակ թույլ տալու իրենց, որ հավիտյան ընկղմվեն կրակի լճի մեջ:
Այդ հոգիների պատճառով է, որոնք աղտոտում են Իմ Եկեղեցին, որ Ես օրվա յուրաքանչյուր վայրկյան վերապրում եմ Պիղատոսի մտրակահարությունը:
Ես երբեք չեմ հանգստանա, մինչև չփրկեմ նրանց:
Օգնեք Ինձ: Ես կոչ եմ անում Իմ բոլոր հետևորդներին աղոթել այդպիսի մեղավորենրի համար:
Ձեր սիրող Հիսուս

Շատ Հռոմի Պապեր բանտարկյալ են եղել Մայր Աթոռում՝ շրջապատված մասոնական խմբերով

Երկուշաբթի, 7 մայիսի, 2012թ, երեկոյան ժ 06:19
Իմ սիրելի աղջիկ, Իմ եկեղեցիներին ողջ աշխարհով մեկ Ես կասեմ հետևյալը:
Իմացեք, որ Ես միշտ ձեզ հետ կլինեմ ձեր կողքին քանի դեռ դուք հռչակում եք Իմ Ամենասուրբ Խոսքը:
Իմ կաթոլիկ եկեղեցուն, նույնիսկ չնայած այն բանին, որ դուք Ինձ տառապանք եք պատճառում չար մեղքի պատճառով, իմացեք, որ Ես երբեք չեմ լքի ձեզ, չնայած դուք մեղանչել եք: Բայց իմացեք հետևյալը:
Իմ հանդեպ ձեր հավատն այնքան ուժեղ չէ, որքան պետք է լիներ: Դուք Ինձ չեք սիրում այնպես, ինչպես մի ժամանակ էիք սիրում:
Ձեր կուտակած ողջ հարստությունը հեռացնում է Իմձ՝ ձեր Քրիստոսին և Փրկչին և Աստծո հասարակ զավակներին:

Դուք բարձրացել եք այնպիսի գոռոզ բարձունքների, որ Ես չեմ կարող հասնել ձեզ և առաջարկել Իմ ձեռքը՝ փրկելու համար ձեզ ձեր ներսում եղած նեխումից:
Ձեզ ասվել է ճշմարտությունն Իմ Պետրոսի կողմից, ում ժայռի վրա դուք կառուցվել եք: Եվ ի՞նչնարեցիք դուք:
Դուք քարե ստվար պատեր կառուցեցիք ձեր շուրջը:
Սա առաջացրեց հաղորդակցության պակաս նրանց հետ, ում դուք պետք է կերակրեիք Իմ Մարմնով և Արյամբ, որպեսզի նրանց հոգիները սնվեին:
Իմ Ամենասուրբ Հաղորդությանը ծառայելու համար ձեզնից պահանջվող հարգանքը կորավ, երբ դուք ստորացրեցիք Իմ Ներկայությունը:
Երբ Վատիկան II-ը հռչակեց նոր կանոններ, այդ կանոնները ներմուծվեցին ձեր միջանցքներում գտնվող չար մասոնական ուժերի կողմից:
Նրանք խորամանկորեն ներմուծեցին **Իմ Սուրբ Հաղորդությանը ծառայելու նոր ձևեր, որոնք վիրավորական են Ինձ համար:**
Ձեր այսպես կոչված հանդուրժող ուսուցումները հռչակեցին ստերի մի շարք՝ ներառյալ **մերժումը՝ ընդունել սուրբ Միքայել հրեշտակապետի զորությունը:**
Նա Եկեղեցու պաշտպանն է Սատանայի դեմ: Ձեր մեջ գտնվող այդ ուժերը գիտեն դա: Ահա թե ինչու դուք դադարեցրիք պատարագից առաջ նրան ուղղված բոլոր աղոթքները:
Հետո դուք իրագործեցիք ամենամեծ ոչ ճշմարտությունը, թե դժոխքից չպետք է վախենալ: Որ այն պարզապես մի փոխաբերություն է: Այդ սուտը, որն Աստծո զավակներից շատերն ընդունեցին որպես ճշմարտություն, **միլիարդավոր հոգիների կորստի պատճառ է եղել:**
Որքան եք դուք Ինձ վիրավորում: Ձեր մեջ եղած խոնարհ և սրբազան սպասավորներին Ես խնդրում եմ ետ վերադառնալ դեպի Իմ Ուսուցումները:
Երբեք թույլ մի տվեք, որ ձեր մեջ գանձեր կուտակվեն և մի մտածեք, թե դրանք ընդունելի են Իմ աչքում:
Իմ Անվամբ կուտակված գանձերը՝ արծաթն ու ուժը, կլինեն ձեր անկումը: Դուք չեք կարողանա օգուտ ստանալ Իմ Սուրբ Խոսքից:
Դուք տառապել եք այն պատճառով, որ վիրավորել եք Ինձ այդ ձևով:
Երբեք չմտածեք, թե Ես մեղադրում եմ Պետրոսի աթոռին նստած այդ բազմաթիվ Պապերին: Նրանց առաքելությունը միշտ պաշտպանվել է:
Շատ Պապեր բանտարկյալներ են եղել Մայր Աթոռում՝ շրջապատված մասոնական խմբերով, որոնք Աստծուն չեն ներկայացնում:
Նրանք ատում են Աստծուն և անց են կացրել **հիսուն տարի՝ ստեր տարածելով Աստծո Գթասրտության մասին:**
Նրանց գործերը տարել են կաթոլիկ եկեղու անկմանը:
Դա պատահակություն չէր: Դա դիտավորյալ կերպով և խորամանկորեն պլանավորված էր եկեղեցու հավատը ոչնչացնելու նպատակով: Միակ ճշմարիտ Աստծո հանդեպ հասարակ կաթոլիկների մեծարանքը ոչնչացնելու նպատակով:
Սրա համար հիմա դուք կնետվեք անապատ: **Բենեդիկտ Պապից հետո դուք կառաջնորդվեք Երկնքից Իմ կողմից:**
Ոհ, որքան եք դուք Ինձ ստիպել լաց լինել:
Ես կոչ եմ անում Իմ բոլոր սրբազան սպասավորներին, ովքեր գիտեն ճշմարտությունը, ոտքի կանգնել և հետևել Ինձ՝ ձեր Հիսուսին՝ խոնարհ սպասավորությամբ Իմ ուսուցումները տարածելու համար:
Դուք պետք է խիզախություն և ուժ գտնեք մոխիրներից բարձրանալու համար:

Ամենից առավել, մերժեք այն ստերը, որոնք կարճ ժամանակից ձեզ կներկայացվեն Կեղծ Մարգարեի կողմից:
Նա կաթոլիկ եկեղեցին կմիացնի մյուս եկեղեցիներին, ներառյալ հեթանոս եկեղեցիների, որ դառնա մեկ պղծություն:
Մեկ համաշխարհային եկեղեցի՝ առանց հոգու:
Ձեր Հիսուս

Կույս Մարիամ. Ամենաբարձրյալ Աստված կարող է փոխել աշխարհի ճակատագիրը

Երեքշաբթի, 8 մայիսի, 2012թ, ցերեկվա ժ 12:30

Զավակս, այս առաքելությունը դարձի է բերում միլիոնավոր հոգիների, ովքեր այլ կերպ կկորչեին:
Երբեք չմտածես, թե քո առջև դրված խոչընդոտները կարող են կասեցնել Սուրբ Հոգու տարածումը:
Իմ Որդին այնքան գոհ է բոլոր նրանցից, ովքեր հետևում են այս ժամանակներում Նրա կողմից աշխարհին տրվող Խոսքին:
Ձեր աղոթքների միջոցով նվիրվածությունը, զավակներս, շատ կորած հոգիների է փրկում: Երբեք մի մոռացեք աղոթքի զորությունը: Այնքան շատ չարիք է խափանվել ձեր աղոքների պատճառով:
Մեկ համաշխարհային խմբի աշխատանքը հիմա վնաս է կրում, իսկ նրանց պլանները խառնաշփոթության մեջ են:
Աստծո Գթասրտությունն այնքան մեծ է, որ աղոթքը կարող է, մեղմացնել աշխարհում գոյություն ունեցող ցանկացած չարիք:
Հիմա Ասուրբ Հոգու լույսի հզորությունն ավելանում է, որպեսզի ավելի ու ավելի շատ հոգիներ տեսնեն Աստծո ճշմարտությունը, մինչ այն վերավառվում է ամենուր:
Զավակներս, դուք պետք է շարունակեք խոսել Իմ Հոր հետ և ավելացնեք Նրա հանդեպ ձեր ունեցած պաշտամունքը:
Կանչելով Հորը՝ Ամենաբարձրյալ Աաստծուն Իր թանկագին Որդու անվամբ, Նա կլսի ձեր աղոթքները և կպատասխանի:
Դուք պետք է ավելի շատ դիմեք Հորը, քանի որ Նա՝ Ամենաբարձյալ Աստվածն է, որ կարող է փոխել աշխարհի ճակատագիրը:
Միայն Իմ Որդու՝ Հիսուս Քրիստոսի միջոցով դուք կարող եք մոտենալ Հորը: Ուստի ահա թե ինչ պետք է դուք ասեք:
Խաչակրաց արշավանքի աղոթք (52) Աղոթք՝ Հորը
Իմ Սիրելի Հայր
Հանուն Քո թանկագին Որդու
և ի հիշատակ Խաչի վրա Նրա կրած Տառապանքի
ես կանչում են Քեզ

Դու, Ամենաբարձրյալ Աստված
Արարիչ աշխարհի և գոյություն ունեցող ամեն բանի
Պահիր մեր փրկությունը Քո Սուրբ Ձեռքերի մեջ

Գրկիր Քո բոլոր զավակներին
Ներառյալ նրանց, ովքեր չեն ճանաչում Քեզ
և նրանց, ովքեր ճանաչում են, բայց նայում են այլ ուղղությամբ

ներիր մեզ մեր մեղքը և փրկիր
մեզ Սատանայի ու նրա բանակի հալածանքից
վերցրու մեզ Քո բազուկների մեջ և լցրու մեզ հույսով
մենք կարիք ունենք տեսնելու ճշմարտության ուղին: Ամեն:

Գնացեք խաղաղությամբ: Ձեր սիրող Մայր
Մայր Փրկության

Իմ մնացորդ եկեղեցին՝ ոգեշնչված Ենովք մարգարեով՝ ատելություն կառաջացնի ամենուր, որտեղ կլսվի Իմ Սուրբ Խոսքը

Երեքշաբթի, 8 մայիսի, 2012թ, երեկոյան ժ 07:00

Իմ սիրելի աղջիկ, Ես գալիս եմ այս երեկո ասելու քեզ, որ Իմ Սիրո և Գթասրտության մի մեծ նվեր հիմա կերևա հավատացողների սրտերի ներսում ամենուր:
Նրանք իրենց սրտերի ներսում կզգան Իմ Ներկայությունն այնպիսի ձևով, որ չեն կարողանա բացատրել, և նրանք իրենց սրտերը կմիավորեն Իմի հետ:
Այդ ընծան նրանց ուժեղ կդարձնի Իմ Հավատի մեջ, և նրանք ամեն օր կքաղցեն Իմ Ներկայությանը:
Ես կոչ եմ անում Աստծո բոլոր զավակներին, ովքեր զգում են իրենց հոգիները կլանող Իմ Սերը, որ ստանան Իմ Մարմինն ու Արյունը Սուրբ Հաղորդության մեջ որքան հնարավոր է հաճախ:
Դուք, Իմ սիրելի աշակերտներ, կարիք ունեք Իմ Մարմնի ընծային Սուրբ Հաղորդության միջոցով, որ ձեզ զորություն տա:
Քանի որ ձեզ պետք կգա այդ զորության յուրաքանչյուր կաթիլը, մինչ ականատես կլինեք թե ինչպես է Իմ Սուրբ և Առաքելական Կաթոլիկ Եկեղեցին մասնատվում:
Իմ Սուրբ Հաղորդությունը կպղծվի, ինչպես Ես կանխասացի որոշ ժամանակ առաջ:
Արդարացումներ կարվեն ներկայացնելու համար այդ Սուրբ Ընծան որպես պարզապես Իմ Խաչելության հիշատակման մի ժեստ:
Շատ շուտով Իմ Իսկական Ներկայությունը կժխտվի՝ որպես նոր ժամանակակից կաթոլիկ եկեղեցու մաս, որը կներառնի այլ կրոնների եկեղեցիներ:
Երբ դա տեղի ունենա, Սուրբ Երրորդության հանդեպ սերն ու նվիրվածությունը կերեա ու կընկնի:
Դրա փոխարեն նրա տեղը կզբաղեցնեն կեղծ աստվածները: Մինչ դժվար կլինի, դուք պետք է հիշեք, որ Ես երբեք չեմ կորցնի երկրի վրա Իմ Եկեղեցին:
Իմ հավատարմությունն այն Եկեղեցու հանդեպ է, որը հիմնադրվեց Իմ կողմից նախքան Ես Երկինք համբարձվեցի:
Ժայռի վրայի եկեղեցին՝ հիմնված Իմ սիրելի Պետրոսի կողմից, չի կարող և երբեք չի մեռնի:

Քանի որ հիմա Ես կառաջնորդեմ Իմ եկեղեցին վերջին ժամանակներում և կնորացնեմ վաղուց կանխասացված մարգարեությունները:
Իմ Ավետարանը կքարոզվի երկրի յուրաքանչյուր մասում Իմ մանցորդ եկեղեցու կողմից:
Իմ մնացորդ եկեղեցին կոգեշնչվի Ենովք կարգարեի կողմից, և դա ատելություն կառաջացնի ամենուր, որտեղ կլսվի Իմ Սուրբ Խոսքը:
Սուրբ Հոգին կբոցավառի Իմ մնացորդ եկեղեցու հավատը, ով երբեք չի թողնի Ավետարանի ճշմարտությունը հայտարարելը մինչև իր մահվան շունչը:
Գնացեք հիմա և պատրաստվեք, Իմ մնացորդ եկեղեցի, հետևելով Իմ հրահանգներին:
Միշտ ԻՆՁ վստահեք, քանի որ ամեն ինչ լավ կլինի:
Ձեր սիրող Հիսուս

Ձեր աշխարհում մասոնական խմբերի աշխատանքն արդեն թուլանում է

Չորեքշաբթի, 9 մայիսի, 2012թ, երեկոյան ժ 09:00

Իմ սիրելի աղջիկ, ավելի ու ավելի շատերը նրանցից, ովքեր գիտեն Իմ ուսուցումները, վերջապես ընդունում են, որ Ես հիմա հաղորդակցվում եմ աշխարհի հետ՝ քեզ տրվող այս պատգամների միջոցով:
Իմ Սուրբ Հոգու զորությունը կարթնացնի նրանց, ում սերը մեռած է Իմ Հոր հանդեպ, որ անուշ անեն Նրա Սիրելի Որդու Խոսքը:
Ես՝ Հիսուս Քրիստոսը, ցանկանում եմ խրախուսել ձեզ այն տառապանքի և փորձությունների մեջ, որը կրում եք:
Այդ տառապանքը երկար չի տևի:
Իմ Սերը ձեր հանդեպ այնքան ուժեղ է, և Իմ Գթասրտությունն այնքան մեծ, որ Ես ձեզ թույլ չեմ տա կրել այն տառապանքները, որոնք ձեզ կհասցվեն նրանց կողմից, ովքեր ցանկանում են վերահսկել ձեր ազգերը:
Մասոնական խմբերի աշխատանքը ձեր աշխարհում արդեն թուլանում է:
Ձեր աղոթքները մեղմացրել են նրանց չար գործերը և դրանք անարդյունավետ դարձրել:
Նրանք կփորձեն ոչնչացնել ձեր հավատը, բայց դուք, Իմ մնացորդ եկեղեցի, վառ կպահեք ճշմարտության բոցը:
Դուք չպետք է վախենաք, եթե վստահում եք Ինձ:
Միայն Ինձ՝ ձեր Հիսուսին վստահելով դուք կարող եք խաղաղություն զգալ:
Խնդրում եմ մոտ մնացեք Իմ Սուրբ Սրտին և թույլ մի տվեք, որ վախը ոչնչացնի ձեր կյանքը:
Երբ սիրում եք Ինձ և ապրում կյանքն այնպես ինչպես Ես եմ ակնկալում ձեզանից, որ ապրեք, ապա պետք է ապրեք ձեր կյանքը սիրո, աղոթքի և զոհության մեջ:
Երբ տառապում եք, առաջարկեք դա Ինձ և առաջ շարժվեք:
Թույլ մի տվեք որ ինչ-որ բան ձեր սիրտը շրջի Ինձնից:
Մոտ մնացեք Ինձ, և Ես կպաշտպանեմ ձեզ, ուղղություն կտամ և կառաջնորդեմ դեպի ապահովություն:
Ձեր սիրող Հիսուս
Մարդկության Փրկիչ

Կույս Մարիամ. Ես տրխության արցունքներ եմ հեղում կաթոլիկ եկեղեցու այն քահանաների համար, ովքեր սոսկալի տապառապում են այս ժամանակներում

Հինգշաբթի, 10 մայիսի, 2012թ, ցերեկվա ժ 03:45

Զավակս, հիմա Իմ Որդի Հիսուս Քրիստոսը նախապատրաստում է փրկել որքան հնարավոր է շատ հոգիներ նախքան Նախազգուշացումը: Քանի որ Նախազգուշացումից հետո շատ ժամանակ չի մնա նախքան Իմ որդու Փառապանծ վերադարձը:
Ես տխրության արցունքներ եմ հեղում Կաթոլիկ եկեղեցու այն քահանաների համար, ովքեր սոսկալիորեն տառապում են այս ժամանակներում:
Այդ մաքուր, կորած և թափառող սպասավորները մնացել եմ պառակտման մեջտեղում, որից չեն կարողանում ազատվել:
Այլոց մեղքերի պատճառով նրանք կրում են տառապանք՝ տեսնելով թե ինչպես է Իմ Սիրելի Որդու հանդեպ հավատարմությունը մի կողմ նետվում:
Մասոնական խմբերը դիտավորյալ են առաջացրել այդ չար բաժանումները: Անմեղ հոգիներին հասցված վիրավորանքների մեջ մեղավորների մեղքերն օգտագործվում են որպես պատրվակ փոխելու համար եկեղեցին կառավարող օրենքները:
Շատերն են սխալ կերպով առաջնորդվում՝ Աստծո զավակների հանդեպ հավատարմության կեղծ զգացմունքի պատճառով:
Ինչպես եմ Ես տառապում, երբ տեսնում եմ, թե ինչպես են կաթոլիկ եկեղեցու պատերը քանդվում աղյուս առ աղյուս՝ նոր եկեղեցու համար ճանապարհ բացելու նպատակով:
Նոր եկեղեցին, որը շուտով դուրս կգա, ընդունելի չի լինի Իմ Որդու կողմից:
Դրա փոխարեն այն կոչնչացնի Սուրբ Հաղորդության ներկայությունը, և Իմ Որդին մեկ անգամ ևս կտառապի Իր Խաչելության ցավով:
Շուտով Նրա կատարած Զոհաբերությունը, որն աշխարհին այդ Ընծան տալու համար էր, կարհամարհվի և կմերժվի:
Դրա փոխարեն նոր եկեղեցին չի ասի Աստծո զավակներին, որ Սուրբ Հաղորդությունը Հիսուսի՝ Իմ Որդու ճշմարիտ Ներկայությունն է:
Նրանք կստեղծեն Սուրբ Հաղորդության մի նոր մեկնաբանություն և դրանով չեն կարողանա բերել Իմ Որդու Ներկայությունը: Կյանքի սնունդը կմեռնի:
Աստծո զավակները չեն սնվի Իմ Որդու իսկական Մարմնով և Արյամբ:
Նրանց հոգիները կդառնան անպտուղ, դատարկ Իմ Որդու Ներկայությունից և այն շնորհներից, որոնք Նա հեղում է Իրեն ստացողների վրա:
Սուրբ քահանաները պարտավորություն ունեն պաշտպանելու Սուրբ Հաղորդությունը: Նրանք պետք է ուժեղ լինեն և երբեք չնվազեցնեն այդ թանկագին և Սուրբ Ընծան:
Իմ Որդին սիրում է Կաթոլիկ Եկեղեցին և գիտի, թե որքան է այն տառապում հենց հիմա: Նա զգում է այդ ցավը:
Իմ Անապական Սիրտը բաժանվել է երկու մասի, ցավով, տեսնելով թե ինչպես է այդ Սրբազան Տաճարը դիտավորյալ կերպով ավերվում:

Աղոթեք, աղոթեք, աղոթեք Հորը Իր սիրելի Որդու անվամբ, որ գթասրտություն ցույց տա նրանց, ովքեր Մայր Աթոռի ներսում ցանկանում են սուզել եկեղեցին և ցրել Աստծո զավակներին լքվածության անդունդի մեջ:
Խնդրում եմ ասեք խաչակրաց արշավանքի այս աղոթքը (53) կաթոլիկ եկեղեցու համար աղոթելու:
Խաչակրաց արշավանքի աղոթք (53) Աղոթք կաթոլիկ եկեղեցու համար

Ոհ Հայր Աստված
Հանուն Քո Սիրելի Որդու
Ես աղերսում եմ Քեզ տալ անհրաժեշտ ուժն ու շնորհները
Օգնելու քահանաներին, որ դիմանան այն հալածանքին, որը կրում են

Օգնիր նրանց մնալ Քո Որդու՝ Հիսուս Քրիստոսի
Ուսուցումների ճշմարտության մեջ և երբեք տեղի չտան, չթուլանան կամ չենթարկվեն
Սուրբ Հաղորդության գոյության վերաբերյալ ոչ ճշմարտություններին: Ամեն:

Ձեր սիրող Մայր, Երկրի Թագուհի
Մայր Փրկության

Մեծ նախապատրաստություններ են տարվում Իմ Երկրորդ Գալուստի համար

Ուրբաթ, 11 մայիսի, 2012թ, երեկոյան ժ 08:38

Իմ սիրելի աղջիկ, մեծ նախապատրաստություններ են տարվում Իմ Երկրորդ Գալուստի համար:
Հիմա աշխարհում շատ մարդիկ կարող են փրկվել և կփրկվեն Իմ սիրելի հետևորդների և ընտրյալ հոգիների աղոթքների պատճառով:
Շատ շատերը չէին փրկվի, եթե չլինեին նրանց զոհաբերությունները, ովքեր մոտիկ են Ինձ:
Ես ծարավի եմ տանել ձեզ բոլորիդ դեպի Խաղաղության Նոր Դարաշրջան՝ երկրի վրա Նոր Դրախտ:
Եթե միայն այն համառ հոգիները, ովքեր մերժում են Իմ Գթասրտության կանչը և ովքեր կարիք ունեն ազատագրվելու Իմ Աչքում, լսեն:
Շատ հավատացողներ գաղջ են և հարմար չեն Իմ Նոր Թագավորություն մտնելու համար: Նրանց փակված և կարծրացած սրտերը հիմա մերժում են Ինձ մինչ Ես խոսում եմ:
Նրանք շրթունքներով ծառայություն են մատուցում Ինձ եկեղեցիներում, սակայն հայտարարում են, թե հետևում են Ինձ:
Հիմա, երբ Ես հասնում եմ և երկարում Իմ Գթասրտության Ձեքը, որ իրենց ձեռքը վերցնեմ Իմի մեջ, նրանք Ինձ մի կողմ են հրում:
Այնքան կասկածամիտ, այնքան հեռու ճշմարտապես հասկանալուց, թե ինչպես եմ Ես այսօր հաղորդակցվում աշխարհի հետ Երկնքից, նրանք հայտարարում են թե հավատում են Իմ Աստվածայնությանը:

Սակայն նրանք չեն կարողանում ընդունել, որ Ես զորություն ունեմ աշխարհի հետ խոսել Աստվածային Հայտնությունների միջոցով:
Նրանք բաց են թողնում առիթը՝ բռնելու այն լրացուցիչ շնորհները, որոնք Ես ցանկանում եմ տալ իրենց որպեսզի իրենց բերեմ դեպի Իմ Սուրբ Սիրտը:
Դա մի փոքր նման է նրան, թե ինչպես է գյուղը տառապում սովից երբ ուտելու ոչինչ չունեն և դանդաղորեն սովամահ են լինում:
Սակայն Ես կանգնած եմ նրանց կողքին և կարող եմ առաջարկել ողջ սնուցումն ու սնունդը՝ կենդանի պահելու համար նրանց Հավիտենական Կյանքի համար: Բայց նրանք չեն կարողանում տեսնել Ինձ:
Շատերը չեն ցանկանում տեսնել Ինձ, քանի որ կասկածում են որ Ես հնարավոր է խոսեմ իրենց հետ հիմա:
Դուք, Իմ սիրելի հետևորդներ, պետք է օգնեք Ինձ փրկել և ծածկել այս աշխարհում նրանց, ովքեր հավատ և հետաքրքրություն չունեն այս աշխարհից դուրս գտնվող այլ աշխարհի հանդեպ:
Շուտով նրանք կհասկանան, որ հոգի ունեն: Այդ ժամանակ է, որ Ես ձեզ բոլորիդ կխնդրեմ հռչակել Իմ Խոսքը, այնպես որ ողջ մարդկությունը կարողանա ապրել Իմ Նոր Դրախտում:
Խնդրում եմ, տարածեք Իմ Խոսքը, Իմ Աղոթքները, Իմ Պատգամները և Իմ Նախազգուշացումները բոլոր հոգիներին, հատկապես նրանց, ովքեր հավատք, հավատ ու գիտելիք չունեն Իմ Խոստումի մասին, որ կվերադառնամ դատելու համար ողջերին ու մեռածներին:
Նրանք շատ ժամանակ չունեն, ուստի Ես կոչ եմ անում ձեզ աղոթել նրանց հոգիների համար:
Ձեր Հիսուս

Կույս Մարիամ. Գնացեք և բացեք ձեր աչքերը, զավակներս, և լսեք, քննեք ու մտածեք այն ամենն ինչ ներկայացվում է ձեզ Աստծո անվամբ

Շաբաթ, 12 մայիսի,2012թ, առավոտյան ժ.10:00

Զավակս, մինչ Սատանայի ու նրա դևերի ոռնոցն ավելի է ուժեղանում, և նրանց ճիչերը ծակում են Երկինքը, Ես պետք է նախազգուշացնեմ Աստծո զավակներին, որ բացեն իրենց աչքերը:
Նայեք ձեր շուրջը, և ի՞նչ եք տեսնում:
Անհանգստություն, վիճաբանություններ, հուսահատություն և մարտ: Այս բոլորը հրահրվել են չար ոգիների կողմից, որոնք շրջապատում են մարդկությունը:
Բաց թողնված դժոխքից, նրանց թիվը մեծ է: Ոչ մի պահ նրանք չեն թեթևացնի այն տառապանքը, որը դուրս են ժայթքում յուրաքանչյուր պահ Աստծո զավակների հանդեպ ունեցած ատելությունից ելնելով:
Այդ ընկած հրեշտակները նախանձեցին, երբ Իմ Հայրը՝ Ամենաբարձրյալ Աստված, ստեղծեց մարդկությունն ու տիեզերքը:
Նրանց հպարտությունն ու գարշանքը տարավ իրենց դեպի անկում, և նրանք դժոխք նետվեցին:

Առաջնորդված Սատանայի կողմից, նրանց ատելությունը ցուցադրվեց, երբ Ես աշխարհ բերեցի մարդու Որդուն՝ մարդկության Փրկչին: Իմ հանդեպ նրանց ունեցած ատելությունն անցնում է մարդկությանը հայտնի ամեն ինչից այն կողմ:
Նրանց շփոթության է հասցրել այն, որ Ես հրեշտակների Թագուհին եմ: Նրանք գիտեն, որ (իենց համար) վերադարձ չկա դեպի Աստվածային Ստորակարգություն (հիերարխիա):
Աստծուն՝ Իմ սիրելի Հորը վիրավորելու համար նրանք ցանկանում են այն, ինչը մոտ է Նրա Սրտին՝ Նրա թանկագին ու սիրելի զավակներին:
Նրանք հոգիներ են գողանում՝ հրապուրելով Նրա զավակներին մեղքի գայթակղություններով:
Իմ Հայրը թույլ չի տա այդ չարությունը, և ժամանակը մոտ է, որ այդ ընկած հրեշտակները վերջնականապես նետվեն հնոցի մեջ: Նրանք գիտեն դա:
Սատանայի ղեկավարությամբ նրանք հիմա մեծացրել են իրենց պլանները և օրվա յուրաքանչյուր վայրկյան աշխարհում խառնաշփոթություն են առաջացնում:
Աստծո զավակները պետք է իմանան, որ նրանց պլանը Աստծուն՝ Ամենակարող Հորը թանկ ամեն ինչը խլելն է:
Ահա թե ինչու նրանք առաջին հերթին երկրի վրա թիրախ են դարձնում Նրա Սուրբ Եկեղեցիները:
Երբ նրանք ներթափանցում են Աստծո եկեղեցիների մեջ, նրանք ներթափանցում են Աստծո զավակների մեջ:
Արթնացեք, զավակներս այն ամենի հանդեպ, ինչ տեղի է ունենում ձեր աչքերի առջև: Դուք պետք է զգոն լինեք միշտ:
Աղոթեք, աղոթեք, աղոթեք, որ օրհնվեք այն շնորհներով, որպեսզի ճանաչեք չարը, երբ այն ձեզ է ներկայացվում որպես Աստծո պլանների մի մասը, որն այդպես չէ:
Հավիտենական կյանք տանող ճշմարիտ ճանապարհի վրա մնալու համար ուժեղ հավատ ունենալ և Երկնքից տրվող այս պատգամներում պարունակվող ճշմարտությունն ընդունել կպահանջվի:
Հավիտենական կյանքը պետք է ողջունել, զավակներս, և այն երբեք չպետք է մերժվի հանուն կեղծ խոստումների:
Այդ կեղծ խոստումներն աշխարհին են ներկայացվում այս ժամանակներում նրանց կողմից, ովքեր առաջնորդում են ձեր ազգերին և որոնց վրա կարող է ազդել ստերի թագավորը:
Գնացեք և բացեք ձեր աչքերը, զավակներս, և լսեք, քննեք ու մտածեք այն ամենի մասին, ինչ ձեզ է ներկայացվում Աստծո անունից:
Ձեր սիրող Խաղաղության Թագուհի
Մայր Փրկության

Իմ Նոր Թագավորությունը. Ձեզ կշռայլվի ճոխ լիություն և դուք ոչ մի բանի կարիք չեք ունենա

Կիրակի, 13 մայիսի, 2012թ, ցերեկվա ժ. 04:00

Իմ սիրելի աղջիկ, ժամանակն է հասկանալ, որ Իմ պատգամները վախ չպետք է բերեն:

Դրանք պետք է սեր բերեն: Դրանք նաև օգտագործվում են՝ ասելու համար նրանց, ովքեր մեղք են գործում կամ սխալ են անում, որ իրենք պետք է ազատագրվեն Իմ Աչքում, կամ էլ Ինձ համար հավիտյան կորած լինեն:
Ինչպե՞ս կարող եմ Ես մարդկությանը չասել Ճշմարտությունը:
Ես հասկանում եմ, որ դու, աղջիկս, երբեմն բեռ ես զգում, լինելով այս Աստվածային Պատգամների ստացողը: Դու երբեք չպետք է թույլ տաս, որ վախը մտնի քո սրտի մեջ, քանի որ այն Ինձնից չի գալիս:
Մի՞թե չեմ ասել, որ Խաղաղության մի Նոր հրաշալի դարաշջան կա բոլոր նրանց առջև, ովքեր սիրում են ինձ:
Ի՞նչ կա վախենալու:
Քո ապագայի՞, քո ընտանիքի՞, թե՞ այն բանի վախն է, թե ինչ է սպասվում: Եթե այդպես է, ուրեմն դու պետք է իմասանաս հետևյալը:
Ես սիրում եմ ձեզ բոլորիդ: Ես ցանկանում եմ, որ Աստծո բոլոր զավակները միավորվեն որպես մեկ Սուրբ Ընտանիք, միասին սիրո մեջ:
Ահա թե ինչու Ես հիմա հաղորդակցվում եմ ձեզ հետ, երկար ժամանակ, որպեսզի ձեզ բոլորիդ Ինձ ավելի մոտեցնեմ:
Ես պետք է նախազգուշացնեմ մարդկությանը այն վտանգների մասին, որոնց դեմ նա կանգնած է, վստահանալու համար, որ դուք բոլորդ շրջվեք և բացեք ձեր սրտերն այն սիրո հանդեպ, որը Ես ունեմ երկրի վրա գտնվող յուրաքանչյուր հոգու նկատմամբ: Եթե Ես ձեզ չսիրեի, ինչպես որ սիրում եմ, Ես ձեզ չէի նախազգուշացնի:
Իմ սերն այնքան ուժեղ է, որ այն անծանոթ է ցանկացած մարդկային էակի համար, քանի որ ձեզնից ոչ մեկը չի կարող ունենալ այն Սերը զգալու կարողությունը, որը Ես ունեմ ձեր հանդեպ:
Իմ Սերը նշանակում է, որ Ես չեմ ցանկանում Աստծո զավակների տառապանքը:
Ես կվերցնեմ ձեզ բոլորիդ, ովքեր Նախազգուշացումից հետո կտեսնեն Ճշմարտությունը, և ձեզ ցույց կտամ Իմ ունեցած Սերը:
Քեզ և բոլոր նրանց ովքեր Ինձ են պատկանում մտքով, մարմնով և հոգով, կտրվի ամենասքանչելի ընծան՝ ձեր հասկացողությունից վեր:
Նոր Դրախտը սպասում է ձեզ, և երկիրը, որին ձեզ թվում է թե կկարոտեք, ոչինչ չի նշանակի, երբ տեսնեք այն Թագավորությունը, որը նախապատրաստվել է:
Զավակներս, շատ բան կա ակնկալելու: Վախն անտեղի է:
Դրա փոխարեն մտածեք, որ ձեզ կտրվի հավիտենական կյանք:
Ձեզ կշռայլվի ճոխ լիություն, և դուք ոչ մի բանի կարիք չեք ունենա:
Գույները, բույրերը, սերը, որ կզգաք ձեր շուրջը գտնվող ամեն ինչի հանդեպ, խաղաղությունը ձեր ընտանիքների ներսում, վախի բացակայությունը, ձեր հոգիները՝ լի Աստծո սիրով, և ձեր կատարյալ մարմինները. Ինչպե՞ս կարող եք չցանկանալ Իմ Թագավորությունը:
Իմ Թագավորությունը կդառնա ձեր նոր տունը, երբ Երկինքն ու երկիրը միանան որպես մեկ և մեռածները, ովքեր Ինձ ընդունել են որպես իրենց Փրկիչը, հարություն կառնեն՝ միանալու համար իրենց ընտանիքներին, իրենց եղբայրներին ու քույրերին սիրով և երջանկությամբ:
Թեթևացումը, որը կզգաք, երբ մեղքի աշխարհը, որի մեջ հիմա դուք ապրում եք, այլևս չի լինի, կբերի ուրախություն, հանդարտություն և զոհություն:
Այլևս ոչ մի անհանգստություն, վախ, հուզմունք կամ մեղք:

Դուք դարձյալ կունենաք ազատ կամք, բայց այն տարբեր կլինի: Դուք կապրեք Ինձ հետ ամբողջական միության մեջ, Իմ Հոր Սուրբ Աստվածային Կամքին համապատասխան: Նա համբերությամբ սպասել է այդ պահին:
Ես համբերատարությամբ նախապատրաստում եմ Աստծո բոլոր զավակներին, որպեսզի ոչ մի հոգի չկորչի:
Ուստի, Իմ թանկագին աղջիկ, մի վախեցիր:
Տառապանքը երկար չի տևի: Դրա տեղում կլինի այն տունը, որին պատկանում է Աստծո յուրաքանչյուր զավակ:
Դա է Իմ խոստումը ձեզ բոլորիդ: Մի տխրեք, մի վախեցեք կամ անհանգստացեք, քանի որ դա ընդհանրապես պետք չէ:
Պարզապես սովորեք Ինձ ավելի շատ սիրել: Որքան Ինձ ավելի շատ սիրեք, այնքան Ինձ ավելի կվստահեք:
Միայն այդ դեպքում վախը կթողնի ձեզ:
Միայն այդ դեպքում դուք ճշմարտապես ազատ կլինեք:
Ես սիրում եմ ձեզ բոլորիդ: Երբեք սա մի մոռացեք, հատկապես երբ անհանգստանաք ապագայի համար:
Ձեր սիրող Փրկիչ
Հիսուս Քրիստոս

Աղոթքի խնդրանքներ. Գնացեք հիմա և ասեք այս խնդրանքը. Իմ կանչը Հիսուսին

Երկուշաբթի, 14 մայիսի, 2012թ, երեկոյան ժ. 06:00

Իմ սիրելի աղջիկ, Ինձ տրված քո ընծան ընդունվել է, և որպես արդյունք այն կփրկի ևս 5 միլիոն հոգիների:*
Իմ ամենանվիրական ցանկությունն է վերջ դնել քո տառապանքներին, բայց քո բերած այդ թանկագին ընծան հիմա նշանակում է, որ Ես կարող եմ փրկել ավելի շատ Աստծո զավակների:
Երբեք մի մոռացիր, որ այս առաքելությունը մարդկությանը դժոխքից փրկելու համար է: Ես քո և այլոց օգնության կարիքն ունեմ դա անելու համար:
Երբեք միայնակ մի զգա, քանի որ Ես սիրում եմ քեզ և քեզ հետ եմ ամբողջ ժամանակ:
Այնքան ավելի ու ավելի շատ Աստծո զավակներ են սկսում լսել Իմ Ձայնը վերջապես:
Սուրբ Հոգու աշխատանքը պտուղ կտա, և շատ շուտով Աստծո սերը կզգացվի նույնիսկ ամենաանպտուղների սրտերում:
Այդ կորած, դատարկ և անպտուղ հոգիները կզգան Սիրո մի բոց և կզգան մի ծանոթ թախիծ՝ դառնալու երկրի վրա Իմ Նոր Թագավորության մասը: Շատերը չեն հասկանա թե ինչու, սակայն ի վիճակի չեն լինի ժխտել ջերմության, սիրո և խաղաղության իրենց զգամունքները:
Այնքան շատերը զարմացած կլինեն և կցանկանան խոսել Ինձ հետ: Դուք պետք է հիմա ամենուրեք միավորեք մարդկանց՝ խնդրելու համար Իմ Սիրո ընծան: Նրանք պետք է խնդրեն, որ յուրահատուկ շնորհներ տրվեն: Դու, աղջիկս, պետք է շաբաթական մի օր տրամադրես դրան: Յուրաքանչյուր կորած հոգի պետք է խնդրի որ օգնեմ իրեն: Եթե նրանց խնդրանքը Իմ Սուրբ Կամքի համաձայն է, ապա Ես

կպատասխանեմ նրանց աղոթքներին: Սա նրանց մեջ կներարկի մի ավելի ուժեղ կապ դեպի Իմ Սուրբ Սիրտը և Իմ Մեծ Գթասրտությունը:
Գնացեք հիմա և կանչեք այս խնդրանքը. <<Իմ կանչը Հիսուսին>>:
Աղջիկս, արա սա որքան կարող ես արագ, քանի որ Ես ցանկանում եմ վստահանալ, որ այդ հոգիները, հատկապես նրանք, ովքեր չեն ընդունում հիմա այդ կայծը, նրանք վերջապես կհասկանան, թե Ես որքան մոտիկ եմ յուրաքանչյուր հոգու:
Ասա նրանց, որ ես սիրում եմ յուրաքանչյուրին և չեմ բացառում ոչ մի մեղավորի, անկնախ նրանից թե որքան ծանր է իրենց մեղքը:
Ես նրանցից միայն խնդրում եմ, որ գան Ինձ մոտ և խնդրեն Ինձ, որ օգնեմ իրենց:
Ձեր Հիսուս

*Առաջին տողում հիշատակված հոգիները փրկվելու են Մարիա Աստվածային Գթասրտության կողմից առաջարկված տառապանքի շնորհիվ և չեն վերաբերում աշխարհին, որովհետև հիմա միլիարդավոր հոգիներ են փրկվում աղոթքի միջոցով:

Երկրորդ կնիքը. 3-րդ համաշխարհային պատերազմը

Չորեքշաբթի, 16 մայիսի, 2012թ, առավոտյան ժ 03:10

Իմ սիրելի աղջիկ, Ես պետք է տեղեկացնեմ քեզ, որ աշխարհում պատրաստ է բռնկվել երրորդ համաշխարհային պատերազմը:
Իմ արցունքները հոսում են այս առավոտ, ինչպես կարողանում ես տեսնել:*
Երկրորդ կնիքը քանդելու ժամանակը պատրաստ է, ինչպես կանխասացվել է Հովհաննես ավետարանչին հայտնության գրքում:
Այն կսկսվի Եվրոպայում:
Ձեր բանկային համակարգը կլինի պատճառը, և Գերմանիան, մեկ անգամ ևս, կներգրավվի այդ ողբերգության մեջ, ինչպես վերջին երկու դեպքերում էր:
Երբ այն սկսվի, շատ բան ավարտված կլինի՝ փրկելով տնտեսությունը, իսկ աղետը կվնասի **Հունաստանին՝ մեծապես ազդելով Ֆրանսիայի անկման վրա:**
Միջին Արևելքը նույնպես կներգրավվի՝ Իսրայելն ու Իրանը կլինեն պատերազմի մեջ, իսկ Սիրիան լուրջ դեր կունենա Եգիպտոսի անկման մեջ:
Աղջիկս, Ես արթնացրեցի քեզ, որ ասեմ սա ոչ թե վախեցնելու համար, այլ **կոչ անելու շատ աղոթքի Եվրապայի համար այս ժամանակ:**
Պատերազմի և փողի պակասի պատճառով բերքի մեծ մասը կկորչի, և **դա կտանի բացելու Երրորդ Կնիքը, որը նշանակում է սով:**
Ահա թե ինչու Ես հիմա կոչ եմ անում Աստծո բոլոր զավակներին՝ փորձելու պահեստավորել չորացրած և չփչացող սնունդ՝ ձեր ընտանիքները սնելու համար:
Կարևոր է աճեցնել սեփական բերքը եթե հնարավոր է:
Այնուամենայնիվ, հիշեք, որ **աղոթքը կարող է մեղմել այդ տառապանքի մեծ մասը:**
Այս պատերազմի արդյունքը կլինի այն, որ **Իմ կաթոլիկ եկեղեցին երկրի վրա կներքաշվի մեկ համաշխարհային եկեղեցու մեջ՝ միասնականացման անվան տակ:**
Այդ միասնականացումը, կամ կեղծ խաղաղությունը, իրականություն կդառնա այն բանից հետո երբ հակաքրիստոսը կհայտնվի՝ կեղծ խաղաղություն ստեղծելու և այսպես կոչված պատերազմին վերջ դնելու համար:

Այդ խաղաղարար դաշինքը կներառնի արևմտյան աշխարհը, մինչև Չինաստանն ու Ռուսաստանը կներգրավվեն համաշխարհային հարցերի մեջ:
Նրանք սպառնալիք կլինեն **<<տասը եղջյուրավոր Գազանին>>**՝ Եվրոպային, և կհաղթեն նրանց՝ կոմունիզմ մտցնելու համար:
<<Կարմիր վիշապը>>՝ Չինաստանը, արդեն ուժեղ դիրք է գրավում աշխարհում աշխարհի ֆինանսների նկատմամբ իրենց վերահսկողության պատճառով:
Կարմիր վիշապն ու **<<Արջը>>, որը Ռուսաստանն է,** չեն սիրում Աստծուն:
Նրանց առաջնորդում է հակաքրիստոսը, ով արևելքից է և թաքվնած է փակ դռների ետևում:
Երբ այս մարգարեությունները ծավալվեն, ողջ աշխարհը կհավատա այս պատգամներին: Այդ ժամանակ կասկածներ չեն լինի:
Խնդրում եմ ասեք խաչակրաց արշավանքի այս աղոթքը, քանի որ այն կօգնի թուլացնել այդ իրադարձությունների ազդեցությունը:
Խաչակրաց արշավանքի աղոթք (54) Աղոթք՝ Հորը, թուլացնելու համար երրորդ համաշխարհային պատերզմի ազդեցությունը
Ով Երկնավոր Հայր, հանուն Քո սիրելի Որդի Հիսուս Քրիստոսի
Ով մեծապես տառապեց մարդկության մեղքերի համար, խնդրում եմ օգնիր մեզ այս դժվարին ժամանակներում, որին դիմակայում ենք,
Օգնիր մեզ դիմանալ այն հալածանքին, որը պլանավորվում է ազահ ղեկավարների և նրանց կողմից, ովքեր ցանկանում են ոչնչացնել Քո եկեղեցիներն ու Քո զավակներին,
Մենք աղերսում ենք Քեզ, սիրելի Հայր, օգնել մեզ կերակրելու մեր ընտանիքները և փրկելու նրանց կյանքը, ովքեր կպարտադրվեն պատերզամի իրենց կամքին հակառակ,,
Մենք սիրում ենք Քեզ՝ սիրելի Հայր,
Մենք խնդրում են Քեզ օգնել մեզ կարիքի ժամանակ,
Փրկիր մեզ հակաքրիստոսի ճանկից,
Օգնիր մեզ դիմադրելու այդ նշանին՝ գազանի նշանին, այն ընդունելը մերժելու միջոցով,
Օգմիր նրանց, ովքեր սիրում են Քեզ , որ հավաարիմ մնան Քո Սուրբ Խոսքին միշտ, որպեսզի Դու կարողանաս հեղել մեզ վրա շնորհները՝ գոյատևելու Մարմնով և Հոգով: Ամեն:
Աղջիկս, Ես հասկանում եմ, որ այս նորությունը կարող է շոկի պես լինել, բայց հիշիր որ աղոթքն ու խաչակրաց արշավանքի աղոթքը (թիվ 33)՝ Կենդանի Աստծո Կնիքը, կպաշտպանեն Իմ հետևորդներին:
Իմ մնացորդ եկեղեցին՝ դուք, զավակներս, կգոյատևեք, չնայած հեշտ չի լինի:
Ձեզ կահաբեկեն քրիստոնյա լինելու համար, բայց դուք երբեք չեք մերժի կամ ժխտի Ինձ:
Սրա համար ձեզ կտրվեն ընծաներ: **Կենդանի Աստծո Կնիքի Իմ Ընծան ձեզ անտեսանելի կդարձնի ձեր թշնամիների համար:**
Ասեք այն ամեն օր այժմվանից սկսած: Ձեր առջև պահեք այն ձեր տներում և տվեք որ քահանան օրհնի այն:
Շուտով սկսեք ձեր նախապատրաստությունները, քանի որ Եվրոպայում անկման օրը հեռու չէ:
Ձեր Հիսուս

*Ծանոթություն. Երբ Մարիան գրում էր պատգամը, մի թաց արցունքնի կաթիլ գլորվեց ցած նրա առջև դրված Հիսուսի նկարից:

Կույս Մարիամ. Իմ տեսանողներին աշխարհում կհանձնարարվի աղոթել՝ կասեցնելու համար համաշխարհային պատերազմի հետ կապված վտանգները

Չորեքշաբթի, 16 մայիսի, 2012թ, առավոտյան ժ 09:00

Զավակս, խնդրում եմ փորձիր ուժեղ լինել Իմ Որդու համար այս աշխատանքի մեջ:
Կարևոր է, որ բոլոր նրանք, ովքեր հավատում են այս ժամանակ աշխարհին տրվող Սուրբ Խոսքի ճշմարտությանը, հանդարտ մնան:
Ձեր պարտականությունը Իմ սիրելի Որդու հրահանգներին պատասխանելն է:
Աղոթքը և Իմ Որդու հանդեպ վստահությունը կբերեն ձեր փրկությունը:
Կենդանի Աստծո Կնիքի ընծան ձեր ամենամեծ պաշտպանությունը կլինի պատերազմի կամ պայքարի ժամանակ:
Այս ձրի ընծան ընդունելու միջոցով հավատարմության խոստում տալով՝ դուք ազատ կմնաք:
Երբեք մի մոռացեք աղոթքի ուժը և թե ինչպես այն կարող է թուլացնել այդպիսի իրադարձությունների ազդեցությունը:
Ցավոք, այդ իրադարձություններից շատերը պետք է կատարվեն, քանի որ դրանց մասին մարգարեացվել է:
Զավակներս, Ես կոչ եմ անում բոլոր նրանց, ովքեր պատվում են Ինձ՝ իրենց Օրհնյալ Մորը, հասկանալու որ սա կոչ է Երկնքից:
Աշխարհում Իմ բոլոր տեսանողներին հրահանգ կտրվի աղոթել՝ կասեցնելու համար համաշխարհային պատերազմի հետ կապված վտանգները:
Դուք պետք է տոկուն լինեք ձեր տառապանքի մեջ և այն առաջարկեք որպես ընծա Հայր Աստծուն:
Այս ժամանակ կարևոր է Իմ Վարդարանն ամեն օր աղոթելը, անկախ նրանից, թե քրիստոնյա որ եկեղեցուն եք պատկանում:
Դուք պետք է աղոթեք այն, որովհետև այն առաջարկում է պաշտպանություն այն ազգերին, ուր մեծ թվով մարդիկ աղոթում են ամեն օր:
Աղոթեք, աղոթեք, աղոթեք Եվրոպայի համար այս ժամանակ, և շրվեք դեպի Իմ Որդին և խնդրեք Նրան այն ուժը, խիզախությունը և տոկունությունը, որոնք անհրաժեշտ են՝ պահպանելու համար Աստծո հանդեպ ձեր ունեցած վստահությունը:
Ձեր սիրող Մայր
Երկնքի և Երկրի Թագուհի
Մայր Փրկության

Ստեղծեք <<Հիսուսը՝ մարդկությանը>> աղոթախմբեր

Չորեքշաբթի, 16 մայիսի, 2012թ, երեկոյան ժ 05:58

Իմ սիրելի աղջիկ, Ես պետք է շեշտեմ բոլոր նրանց, ովքեր հավատում են Ինձ, որ կարևոր է **աղոթել ձեր ազգերից յուրաքանչյուրի համար:**
Սա արդյունավետորեն անելու համար դուք պետք է ստեղծեք աղոթախմբեր, նվիրված <<Հիսուսը՝ մարդկությանը>>:
Օգտագործեք այդ խումբը ասելու համար ձեզ տրված խաչակրաց արշավանքի բոլոր աղոթքները:
Իմ աղջիկը՝ Մարիան, այնպես կդասավորի դրանք, որ կարողանաք տպել դրանք անկախ նրանից թե աշխարհի որ մասում եք գտնվում:
Խնդրում եմ տարածեք Իմ Սուրբ Խոսքը հոգևորականության բոլոր անդամներին:
Ոմանք կմերժեն Իմ պատգամները:
Ուրիշներն էլ կգրկեն դրանք սիրով իրենց սրտում:
Սակայն, մեծ մասամբ, ձեզ կծաղրեն ու կմերժեն իմ Սուրբ Անվամբ:
Դուք կտառապեք ինչպես Իմ առաքյալները տառապեցին և ծաղրի առարկա կդառնաք երկրի վրա Իմ Եկեղեցու որոշ մասերում:
Այդ բանավոր և նախատական վիրավորանքները **ուժգին** կլինեն, և ձեզ կվիրավորեն:
Բայց Ես ասում եմ հետևյալը:
Հիշեք, ձեր հանդեպ ցույց տրվող ատելությունը կապացուցի, որ իրոք այդ Ես եմ՝ ձեր Հիսուսը, որ խոսում եմ ձեզ հետ Երկնքից:
Այդ տառապանքի պատճառով ամեն անգամ Ես ձեզ վեր կբարձրացնեմ, երբ ձեզ հարվածեն գցեն գետնին:
Ես ձեզ վեր կբարձրացնեմ և ավելի ուժեղ կդարձնեմ:
Ինչու՞ եմ Ես սա անում: Ես դա անում եմ, որպեսզի դուք ավելի հարմար և ուժեղ դառնաք Իմ Սուրբ Խոսքը տարածելու համար:
Քանի որ միայն այդ ժամանակ կստանաք այն ավելի մեծ Ընծաները, որոնցով Ես կապահովեմ ձեզ Իմ Սուրբ Հոգու միջոցով:
Ուստի բարձրացեք և շարժվեք նախապատրաստելու համար ձեր ազգը, որպեսզի նրանք ստանան անհրաժեշտ սպառազինությունը՝**խուսափելու համար Գազանի Նշանից:**
Երբեք մի մոռացեք Կենդանի Աստծո Կնիքի կարևորությունը:
Այն կառաջարկի ձեզ և ձեր ընտանիքին պաշտպանություն ոչ միայն հոգով, այլև **ֆիզիկական պաշտպանություն նույնպես:**
Դուք օրհնյալ եք որ ստանում եք Կնիքը, և ձեր պարտականությունն է վստահանալ, որ որքան հնարաավոր է շատ Աստծո զավակներից ամենուր ստանան այն:
Հիշեք, Ես կանգնած եմ Իմ բոլոր հետևորդների կողքին ամեն պահի, և երբ նրանք կատարում են Իմ աշխատանքը, նրանք կստանան յուրահատուկ շնորհներ, որոնք նրանց քաջ, ուժեղ և վճռական կդարձնեն՝ փրկելու համար յուրաքանչյուր մարդու, կնոջ և երեխայի հոգիներն աշխարհում:
Ձեր սիրող Փրկիչ

Կույս Մարիամ. Այդ Կնիքը կանխասացվել է Հովհաննու գրքում

Հինգշաբթի, 17 մայիսի, 2012թ, առավոտյան ժ 08:50

Զավակս, Աստծո զավակները կկարողանան պաշտպանել իրենց հավատքը, քաջությունն եւ ապահովությունը ցանկացած պատերազմի ընթացքում, եթե շարունակեն աղոթել **Խաչակրաց արշավանքի աղոթքը՝ Կենդանի Աստծո Կնիքը:**
Սա Երկնքից մարդկությանը տրված Պաշտպանության Կնիքներից ամենամեծն ու ամենավերջիններից մեկն է:
Այն օգնելու համար է, որպեսզի կարողանաք դիմանալ գալիք ցանկացած հալածանքի ընթացքում, հատկապես գերիշխման և պատերազմի ժամանակներում:
Այս Կնիքը կանխասացվել է Հովհաննու գրքում և ունի շատ աստվածային զորություններ կապված իր հետ:
Փայփայեք այն և օգտագործեք ոչ միայն ձեզ այլև ձեր ընտանիքները պաշտպանելու համար:
Այս հիշեցումն անհրաժեշտ է այս ժամանակ:
Գնացեք խաղաղությամբ
Ձեր սիրող Մայր
Մայր Փրկության

Միակ մնացորդ եկեղեցին, որը կկանգնի անպարտ մինչև Նոր Երուսաղեմի բարձրանալը

Ուրբաթ, 18 մայիսի, 2012թ, առավետյան ժ 10:48

Իմ սիրելի աղջիկ, իմացիր հիմա, որ Իմ Սուրբ Հոգու տարածումը աշխարհում հնարավոր չէ ետ պահել:
Ճշմարտության Բոցը կհամակի աշխարհը և շատերի հոգիները կլցնի Իմ Մեծ Գթասրտության պարզ հրաշքով:
Շատ դարձ տեղի կունենա, և այդ ժամանակ է որ Իմ մնացորդ բանակը կբարձրանա՝ դառնալու համար մի հզոր ուժ հակաքրիստոսի դեմ պատերազմում:
Իմ մնացորդ քրիստոնյա եկեղեցին **կտարածի Սուրբ Ավետարանն աշխարհի յուրաքանչյուր անկյունում:**
Կրակ կհեղվի նրանց վրա, ովքեր կփորձեն վնասել Իմ մնացորդ եկեղեցուն: Քանի որ շատ քչերը կկարողանան դիմանալ Իմ Սուրբ Խոսքի Ճշմարտությանը, երբ այն ցույց տրվի իրենց:
Նրանք այնքան շատ կլինեն, որ կհասնեն մոտ 20 միլիոնի:
Առաջնորդներ դուրս կգան ձեր միջից, և դուք ստիպված կլինեք որոշ մասերում գաղտնի գործել ձեր հավատը:
Դուք կկատարեք Իմ Ուսուցումների խաչակրաց արշավանք, իսկ Իմ խաչակրաց արշավանքի աղոթքները կլինեն ձեր զենքը՝ պարտության մատնելու համար թշնամուն:
Օտարականները կդառնան մոտիկ, մարդիկ տարբեր երկրներից կմիանան միմյանց, իսկ անցյալում իրենց տարբերությունների հետևանքով տարանջատված կրոնները բոլորը կմիավորվեն որպես մեկ:
Մեկ մնացորդ եկեղեցին, որը կկանգնի անպարտ, մինչև Նոր Երուսաղեմի բարձրանալը:
Ահա թե երբ տեղի կունենա Իմ Երկրորդ Գալուստը:

Երբ Իմ Նոր Երուսաղեմը բարձրանա մոխիրներից, այն տեղից ուր բոլոր Ինձ հակադրվողների կարծիքով երկրի վրայի Իմ եկեղեցին հիմնահատակ այրվել է:
Եվ այդ ժամանակ դա կլինի:
Նոր Սկիզբը:
Նոր Դարաշրջանը:
Նոր Երկինքն ու Նոր Երկիրը:
Ժամանակը, երբ վերջնականապես կիրականացվի Իմ Հոր Աստվածային Կամքը:
Բարձրացիր հիմա, Իմ բանակ: Զանազանակերպվիր և տարածիր թևերդ: Երբեք մի շեղվիր Սուրբ Աստվածաշնչում պարունակվող Ճշմարտությունից:
Երբեք մի կասկածիր Սուրբ Գրվածքերում պարունակվող խոսքերին:
Ձեր միջից նրանք, ներառյալ երկրի վրա Իմ եկեղեցու անդամները, ովքեր կասկածում են, դուք պետք է բացեք ձեր սրտերը Ճշմարտության հանդեպ:
Աստվածաշնչում Աստծո Սուրբ Խոսքն է պարունակվում: Աստվածաշնչում պարունակվում է ողջ Ճշմարտությունը:
Այն չի ստում:
Եթե դուք ժխտում եք նրա մեջ պարունակվող Ճշմարտությունը, դուք ժխտում եք Աստծո Խոսքը:
Ձեր Փրկիչ
Հիսուս Քրիստոս

Հայր Աստված. Մի վախեցեք Իմ Ձեռքից, այլ նրանց ձեռքից, ովքեր ձեր թշնամիներն են

Ուրբաթ, 18 մայիսի, 2012թ, ցերեկվա ժ. 03:20

Այսօր Ես քեզ հետ խոսում եմ, Իմ սիրելի աղջիկ, հանգստացնելու համար նրանց, ովքեր վախենում են ապագայից:
Ապագան, սիրելի զավակներ, Իմ Սուրբ Ձեռքերի մեջ է:
Եկել է ժամանակը նոր Թագավորության համար, այն Թագավորության, որի վրա Իմ սիրելի Որդին է թագավորելու:
Սա վերջնական էտապն է, երբ երկիրը նախապատրաստվում է առաջ բերելու բազմություններ, ովքեր սիրում են Իմ Որդուն, և ովքեր սիրում են Ինձ:
Շատ բան պետք է տեղի ունենա, որ Իմ Աստվածային Կամքը կատարվի, և աղոթք, համբերություն ու արիություն են պետք:
Մի վախեցեք Իմ Ձեռքից, այլ նրանց ձեռքից, ովքեր ձեր թշնամիներն են:
Շատ չարություն կա աշխարհում, և եկել է ժամանակը որ Ես պատժեմ այն ազգերին, ովքեր տանջում են Իմ զավակներին երկրի վրա:
Մինչ մարտը սկսվում է, այն տները, որոնք պատվում են Ինձ՝ Հայր Աստծուն, կնորացվեն:
Շուտով նրանք կհասկանան, թե ինչպես են մերժել միակ ճշմարիտ Մեսիային Իմ Որդի Հիսուս Քրիստոսի մեջ, որին Ես ուղարկել էի երկիր՝ աշխարհին փրկություն տալու համար:

Հետո նրանք, ովքեր հավատում են Իմ Որդուն և Ինձ՝ Ամենաբարձրյալ Աստծուն, կբարձրանան միասնությամբ՝ հող նախապատրաստելու, որպեսզի **Իմ Որդու Երկրորդ Գալուստը տեղի ունենա:**
Միայն այն ժամանակ Իմ Որդին կվերադառնա, երբ մաքրագործումն ավարտվի: Մաքրագործումը, որի մասին Ես խոսում եմ, այն է երբ բարիները կառանձնացվեն նրանցից, ովքեր չար են: Նրանք, ովքեր իրենց կյանքն ապրում են Սատանայի կողմից իրենց սրտերում լցված ստերով, դեռևս ապաշխարելու ժամանակ ունեն:
Ես ամեն ջանք կգործադրեմ նրանց գազանից փրկելու համար, քանի որ Ես այդքան հեշտությամբ չեմ զիջում Իմ զավակներին:
Ես, Իմ կողմից արտոնված զանազան Աստվածային Միջամտությունների միջոցով, կփորձեմ վերցնել նրանց Իմ Գթառատ Բազուկների մեջ՝ նրանց փրկելու համար: Իմ հանդեպ վստահությունն ու հավատը դեպի Հավիտենական Կյանք տանող արահետն է:
Միայն Իմ Որդու՝ աշխարհի Փրկչի միջոցով դուք կարող եք գալ Ինձ մոտ՝ Տիրեզերքի Հոր մոտ:
Քանի որ Ինձ մոտ գալու համար դուք պետք է փրկված լինեք Մեղքից:
Մեղքից փրկված լինելու համար դուք պետք է ազատագրվեք Իմ Որդու Աչքում:
Ճիշտ ինչպես Ես առաջին անգամ Իմ Որդուն ուղարկեցի ձեզ փրկություն շնորհելու համար, նույնպես Ես ուղարկում եմ Նրան մեկ անգամ ևս մի վերջին անգամ ձեզ փրկելու համար նախքան **Նոր Երկինքն ու Նոր Երկիրը կմիանան՝ դառնալու համար մեկ:**
Նրանք, ովքեր Իմ բոլոր զավակներին դրախտ բերելու համար ասվող այս վերջին Խաչակրաց արշավանքից հետո մերժեն ընդունել Իմ Որդու Մեծ Գթասրտությունը, ապա իրավամբ նրանց պատկանող ժառանգությունն ընդմիշտ կկորչի:
Դրանից հետո վերադարձ չի կարող լինել:
Երբեք մի մոռացեք, թե Ով Եմ Ես:
Ես Հայր Աստվածն եմ և Ես ստեղծեցի ձեզ:
Ես սիրում եմ ձեզ:
Ես ցանկանում եմ ձեզ բոլորիդ տուն բերել, բայց ինչպես են Իմ Արցունքները հոսում: Սա այն պատճառով է, որ կլինեն այնքան շատերը, որոնց Ես չեմ կարողանա փրկել, եթե նրանք չշրջվեն և չխնդրեն Ինձ օգնել իրենց:
Այս կանչը Երկնքից կանխասացվել է:
Միայն Աստծո Գառը՝ Իմ Որդին է իրավասու բացահայտելու ձեզ այն իրադարձությունները, որոնք առջևում են:
Միայն Նա կարող է բացել Կնիքները:
Նա անում է դա հիմա յոթերորդ հրեշտակի՝ յոթերորդ պատգամատարի օգնությամբ:
Բացեք ձեր աչքերը և ընդունեք, որ կանխասացված Ճշմարտության Գիրքը հիմա վերջապես բացվում է գլուխ առ գլուխ ձեր աչքերի առջև:
Ընդունեք դա որպես Ընծա, քանի որ այն կբերի ձեզ հավիտենական կյանք:
Ձեր սիրող Երկնավոր Հայր
Աստված Ամենաբարձրյալ

Կույս Մարիամ. Չարը ամենաշատը հարձակվում է նրանց վրա, ովքեր սիրում են Աստծուն

Կիրակի, 20 մայիսի, 2012թ, ցերեկվա ժ 12:15

Զավակս, ինչպես ավելի շատերն են Աստծո զավակներից գրկում այս Սուրբ Պատգամները, նույնպես կլինեն ավելի շատերը, ովքեր կմերժեն դրանք:
Բոլոր նրանք, ովքեր ամենամոտն են Իմ Որդուն, գայթակղության կենթարկվեն չարի կողմից, որ շրջեն իրենց մեջքը:
Նրանք ամենաշատը կտառապեսն, իսկ կասկածները կփակեն նրանց մտքերը ճշմարտության հանդեպ:
Չարը ամենաշատը հարակվում է նրանց վրա, ովքեր սիրում են Աստծուն:
Երբ նա /չարը/ կուրացնում է նրանց ճշմարտության հանդեպ, ապա հողթում է:
Նրանք, ովքեր հարգում են Ինձ՝ Աստծո Մորը, նույնպես թիրախ կլինեն, ուր չարը նրանց հեռու կքաշի Ճշմարտության Գրքից:
Նա՝ չարը, երբեք տեղի չի տալիս: Նա սարսափելի տառապանքներ է հասցնում սիրող հոգիներին, որպեսզի նրանք հրաժարվեն Աստծո Խոսքից:
Ես աղերսում եմ բոլոր նրանց, ովքեր սիրում են Իմ Որդուն, որ լսեն Իմ կանչը: Դուք պետք է լսեք, երբ Իմ Որդին խոսում է ձեզ հետ:
Մի մերժեք այն առիթը՝ օգնելու ձեր եղբայրներին ու քույրերին ստանալու իրենց խոստացված հավիտենական կյանքը:
Թույլ մի տվեք, որ խաբեբայի կողմից սերմանված կասկածները արգելեն միլիոնավոր հոգիների փրկվել:
Սա այն կատաղի ընդդիմությունն է, որը կտեղա ձեզ վրա այս օրվանից սկսած:
Դուք պետք է կանչեք Ինձ՝ ձեր Մորը, որ օգնեմ ձեզ, ուղղություն տամ և առաջնորդեմ ճշմարիտ ուղիով:
Ձեր սիրող Մայր
Մայր Փրկության

Աղոթեք, որ կարողանաք ճանաչել ճշմարիտ մարգարեներին նրանցից, ովքեր չեն խոսում Իմ Սուրբ Անվամբ

Կիրակի, 20 մայիսի, 2012թ, երեկոյան ժ 06:10

Իմ սիրելի աղջիկ, ասա Աստծո զավակներին, որ այսօր աշխարհում Իմ մարգարեներին կմերժեն ճիշտ այնպես, ինչպես նրանց մերժում էին սկզբում:
Նրանք, ովքեր հայտարարում են, թե այսօր գալիս են Իմ Անունից, բայց պատգամներ չեն ստանում Աստծուց, նրանց կգրկեն և կընդունեն:
Նրանք, ովքեր հռչակում են Իմ Սուրբ Անունը և մարգարեանում Իմ Սուրբ Հոր Անվամբ, կտառապեն ամենամեծ մերժումից:
Քահանաներն ու հոգևորականները կհարձակվեն Իմ մարգարեների վրա այսօր, որովհետև սատանան կուրացնում է նրանց Իմ Սուրբ Խոսքի հանդեպ:
Թող ամեն մարդ, ով փորձում է կասեցնելԱստծո ճշմարիտ մարգարեներին, իմանա, որ իրենք ծանր մեղք կգործեն Աստծո աչքին:

Սրբազան սպասավորներն ու նրանք, ովքեր հռչակում են Իմ Ուսուցումների ճշմարտությունը, կպատժվեն, եթե փորձեն սաբոտաժի ենթարկել այս Սուրբ Աաքելությունը:
Նրանք, ովքեր չեն հավատում այս ժամանակ աշխարհին տրվող Իմ Սուրբ Խոսքին, պետք է լուռ մնան:
Քանի որ եթե դուք չլռեք և մերժեք Ինձ, ապա պատասխանատու կլինեք և կողբաք ու կաղերսեք Ինձ՝ ներել ձեզ:
Ձեր պատճառած վնասը կզգացվի այն ժամանակ, երբ հոգիները կկորչեն:
Երբեք մի մերժեք մարգարեների միջոցով ձեզ տրվող Իմ Սուրբ Խոսքը:
Գրկեք այն և ընդունեք, քանի որ շատ աշխատանք է անհրաժեշտ նախապատրաստելու համար ողջ մարդկությանը Իմ Նոր Թագավորության համար:
Հիշեք սա:
Երբ Մարդը մերժում է Իմ Խոսքը այդ ժամանակ է որ պետք է սպասել որ սատանան թափառում է երկրի վրա:
Երբ մի հավատարիմ սպասավոր մերժում է Ինձ, դա նման է մի սրի, որը կտրում անցնում է Իմ միջով:
Դա ամենացավալի մերժումն է:
Եկեք Ինձ մոտ բոլորդ: Եթե չեք հավատում, ապա աղոթեք, որ շուտով ձեզ ցույց տրվի ճշմարտությունը:
Եթե կասկած ունեք, շրջվեք դեպի Ինձ և խնդրեք Ինձ բացել ձեր սիրտը:
Թույլ տվեք Ինձ լցնել ձեզ շնորհներով, որպեսզի օգնեք Ինձ ժամանակին հավաքելու հոգիներին աշխարհի բոլոր մասերում:
Չհավատաք, որ Երկրորդ Գալուսը կարող է տեղի ունենալ կամ տեղի կունենա առանց Իմ մարգարեների օգնության, որոնք ուղարկվում են ձեզ նախապատրաստելու համար որ հարմար լինեք ներս մտնել Իմ Թագավորություն:
Աղոթեք, որ կարողանաք ճանաչել ճշմարիտ մարգարեներին նրանցից, ովքեր չեն խոսում Իմ Սուրբ Անվամբ:
Վայ նրանց, ովքեր հեռացնում են Իմ մարգարեներին, քանի որ նրանք ստիպված կլինեն պատասխան տալ Իմ Սուրբ Հոր՝ Ամենաբարձրյալ Աստծո դեմ իրենց վիրավորանքների համար:
Գնացեք, բացեք ձեր աչքերը:
Նայեք, երբ Ես բացահայտում եմ ձեզ ճշմարտությունը:
Մի շրջեք ձեր գլուխը:
Մի փակեք ձեր աչքերը:
Ժամանակն է, որ ընտրեք:
Հետևեք Ինձ և օգնեք առաջնորդելու Իմ զավակներին դեպի Հավիտենական Կյանք:
Շրջեք ձեր մեջքը, և դուք կմերժեք այդ հոգիներին Իմ աչքում ազատագրվելու հնարավորությունը:
Ձեր Հիսուս

Նախազգուշացման տեղի ունենալու ժամանակը մոտենում է

Երկուշաբթի, 21 մայիսի, 2012թ, երեկոյան ժ 08:15

Իմ սիրելի աղջիկ, Նախազգուշացման տեղի ունենալու ժամանակը մոտենում է: Դեռևս այնքան շատ աշխատանք կա կատարելու նախապատրաստելու համար հոգիներին Իմ Մեծ Գթասրտությանը:
Ես կոչ եմ անում բոլոր նրանց, ովքեր սիրում են Ինձ, որ սրտանց աղոթեն այն գլոբալ դարձի համար, որը Ես եմ ցանկանում:
Այնքան շատերը վազելով կգան Իմ Բազուկների մեջ, թեթևությունը կողողի նրանց հոգիները, որովհետև կիմանան, որ այդ Ես եմ՝ իրենց սիրող Հիսուսը, որ նշան եմ անում իրենց:
Այնքան շատերը դեմ կկանգեն ճշմարտությանը, երբ այն ներկայացվի իրենց: Իմ բացահայտած ապացույցը **բավական չի լինի նրանց հոգիներում սիրո մի կայծ վառելու համար:**
Նրանց գողացել են Ինձնից, սակայն նրանք չեն ցանկանում ազատվել իրենց կալանողից՝ գազանից, ով խժռել է նրանց հոգիները:
Տարածիր Իմ Խոսքը որքան կարող ես արագ, աղջիկս:
Անտեսիր այն խայթոցները, ծաղր ու ծանակը որ կլինի նրանց կողմից, ովքեր կփորձեն կասեցնել քեզ:
Բարձրացիր և ամեն գնով հայտարարիր Իմ Ամենասուրբ Խոսքը:
Նրանք, ովքեր ասում են թե խոսում են Իմ Անվամբ և փորձում են նվաստացնել քեզ , խաչում են Ինձ: Նրանք քեզ չեն տանջում, այլ Ինձ՝ իրենց սիրող Փրկչին:
Մարդկային կարծիքը կարևոր չէ: Կարևորը միայն այն հոգիներն են, որոնց Ես տենչում եմ փրկել:
Աղոթեք խաչակրաց արշավանքի աղոթքը (55) Նախազգուշացմանը նախապատրաստվելու համար.
Ով Իմ սիրելի Հիսուս
Խնդրում եմ բաց արա Աստծո
Բոլոր զավակների սրտերը
Քո Մեծ Ընծայի հանդեպ

Օգնիր նրանց ընդունել Քո Աստվածային Գթասրտությունը
Սիրով և երախտագիտությամբ
Օգնիր նրանց որ խոնարհ դառնան Քո առջև
և ներողություն խնդրեն իրենց մեղքերի համար
որպեսզի կարողանան դառնալ
Քո Փառահեղ Թագավորության մասը:
Ամեն:

Շուտով միլիոնավորներ կլսեն Իմ Կանչն աշխարհում, և ավելի շատ հոգիներ կարող են փրկվել և կփրկվեն:
Երբեք մի մոռացեք Աստվածային Գթասրտության աղոթքի ամենօրյա ասելը՝ հոգիներ փրկելու համար:
Գնացեք խաղաղությամբ և սիրով:
Ձեր սիրող Հիսուս

Իմ Ճշմարտության Գիրքը ինչպես բոց կտարածվի արագորեն ամբողջ աշխարհով

Երեքշաբթի, 22 մայիսի, 2012թ, ցերեկվա ժ 03:20

Իմ սիրելի աղջիկ, այս Սուրբ Առաքելության հաջորդ էտապը պատրաստ է ծավալվելու:
Իմ Ճշմարտության Գիրքը ինչպես բոց կտարածվի արագորեն աշխարհով:
Դարձը արագ կլինի, և Իմ Սուրբ Խոսքը կլսվի բոլոր լեզուներով:
Իրենց հերթին Աստծո բոլոր զավակները կտարածեն Իմ Պատգամները և կլցվեն Սուրբ Հոգով:
Նրանց շրթունքները կասեն Ճշմարտությունը և կմարգարեանան լեզուներով որպեսզի ճշմարտությունը լսվի արագորեն:
Աստծո զավակների ծարավը, ովքեր մոլորված թափառում են իրենց հոգիների դատարկ լինելու պատճառով, կհագեցվի:
Իմ Ներկայության հանդեպ քաղցի ցավերը կբավարարվեն, երբ Ես այդ հոգիների համար բերեմ այն սնունդը, որի կարիքը նրանք հուսահատորեն ունեն:
Երբ դա տեղի ունենա, աշխարհում շատ քիչ հոգիներ անտեղյակ կլինեն Իմ Մեծ Գթասրտությանը:
Վերցրեք Իմ Ընծան՝ Իմ Սուրբ Խոսքը, Իմ Ճշմարտության Գիրքը և կուլ տվեք այն:
Քանի որ առանց դրա դուք նման կլինեք մարմնի՝ առանց հոգու:
Երբ կուլ տաք Իմ Իմաստության Խոսքերը, դուք նորից ամբողջական կդառնաք:
Երբ նորից ամբողջական դառնաք, պատրաստ կլինեք Ինձ հետ գալու դեպի երկրի վրա Խաղաղության Նոր Դարաշրջան:
Ակնկալեք հիմա, Իմ սիրելի հետևորդներ, քանի որ Իմ Գրված Խոսքը ձեզ հետ կլինի շուտով, և դուք կուրախանաք սիրով և խաղաղությամբ ձեր հոգիների մեջ:
Առաջ գնացեք, Իմ բոլոր հետևորդներ:
Դուք, ձեր սիրելիներն ու բոլոր հավատացողները թող մարգարեանան Իմ Անվամբ:
Քայլեք Ինձ հետ մինչ Ես ձեզ առաջնորդում եմ դեպի Հավիտենական Կյանք:
Ձեր սիրող Հիսուս
Ազատարար ողջ մարդկության

Հայր Աստված. Հիմա տառապանքն աշխարհում միացել է Իմ Որդի Հիսուսի տառապանքին

Չորեքշաբթի, 23 մայիսի, 2012թ, ցերեկվա ժ 03:38

Իմ սիրելի աղջիկ, ասա Իմ զավակներին այն սիրո և պաշտպանության մասին, որ Ես առաջարկում եմ նրանց, ովքեր կանչում են Ինձ:
Իմ Սուրբ Խոսքը վերջապես լսվում է երկրի վրա և շատ հոգիներ են **պատրաստ կատարելու հավատի ամենամեծ ցատկը՝ գրկելու համար Իմ Որդու՝ Հիսուս Քրիստոսի Աստվածային Գթասրտությունը:**
Քիչ գիտեն նրանք, որ Նոր Դրախտ՝ Խաղաղության Նոր Դարաշրջան մտնելը միայն մի հասարակ բան է:
Վեր նայեք և ընդունեք, որ դուք Իմ զավակն եք առաջին հերթին:

Ընդունեք, որ Ես ստեղծել եմ ձեզանից յուրաքանչյուրին, ձեզանից ոչ մեկը պատահականություն չէ, և որ դուք Իմ զավակներն եք:: Իմ Ընտանիքը: Իմ Սիրելիները:
Իմ Սրտում քնքշությունը լի է սիրով ձեզանից յուրաքանչյուրի հանդեպ:
Շատերն են կարծում, թե որորվհետև Ես Եմ՝ Ալֆան և Օմեգան, սկիզբը և վախճանը, և որ Իմ Զորությունն Ինձ հպարտ է դարձնում:
Սա, իհարկե, երբեք չի կարող լինել:
Ինչպե՞ս կարող է ծնողի ճշմարիտ սերը զավակի հանդեպ ամպած լինել հպարտությամբ:
Ես տառապում եմ ձեզանից յուրաքանյուրի համար: Ես ողբում եմ նրանց համար, ովքեր կորած են Ինձ համար: **Ես կօգտագործեմ յուրաքանչյուր զորություն, որ ետ բերեմ Իմ կորած զավակներին Իմ Ընտանիք, Իմ Թագավորություն:**
Պատկերացրեք մի ծնողի, ով մերժված է իր զավակի կողմից: Վիրավորանքը, որ Ես զգում եմ Իմ՝ իրենց Հոր հանդեպ չէ, այլ իրենց, և այն տառապանքի համար, որ նրանք կտառապեն, եթե Ես չկարողանամ փրկել նրանց:
Հիմա տառապանքն աշխարհում միացել է Իմ Որդի Հիսուսի տառապանքին:
Ինչու՞ եմ Ես դա անում: Ինչու՞ եմ Ես թույլ տալիս տառապանքը: Դա մեղքի պատճառով է:
Մեղավորները, ովքեր չեն գալիս Ինձ մոտ կամավորաբար, կարող են փրկվել միայն այլոց տառապանքների միջոցով:
Նրանք, ովքեր տառապում են այս կյանքում, կպարգևատրվեն Իմ Ընծաներով հաջորդ կյանքում:
Կամավոր ձևով առաջարկված օգնությունը այն զավակների կողմից, ովքեր սիրում են Ինձ՝ հզոր զենք է Սատանային տրամադրված ուժի դեմ:
Նրանք ովքեր մարտնչում են Իմ Որդու կողքին՝ փրկելու համար այլոց հոգիները, կարող են փրկել ողջ մարդկությունը:
Սատանան զորություն ունի, բայց միայն իրեն տրված զորությունը, որը չի կարող ետ վերցվել մինչև Դատաստանի Օրը:
Ձեզնից շատերը, սիրելի զավակներ, չեն հասկանում Աստվածային օրենքները, որոնք թույլ են տալիս այդ բաները: Բայց վստահեք Ինձ, երբ Ես բացահայտում են սա:
Սատանան կգողանա իմ այն զավակների հոգիները, ովքեր չեն հավատում Ինձ կամ այն բարությանը, որով Ես ապահովում է Իմ զավակներին:
Նա դառնում է անուժ, երբ մեղավորները զոհողություններ են անում տառապանքի միջոցով՝ իրենց եղբայրներին և քույրերին դժոխք գնալուց փրկելու համար:
Նա մնում է անուժ, երբ Իմ զավակներն աղոթում են որ այդ հոգիները փրկվեն:
Աղոթքը իմ այն զավակների զենքն է, ովքեր ցանկանում են օգնել Ինձ փրկելու ողջ մարդկությանը:
Հավաքվեք միասին, զավակներս, Իմ Որդու հետ, և օգնեք Ինձ վերջապես միավորել Իմ ընտանիքը:
Օգնեք Ինձ բերել ձեզ բոլորիդ Խաղաղության նոր հրաշալի Դարաշրջան:
Միայն այդ դեպքում Իմ Կամքը կարող է լինել երկրի վրա ինչպես Երկնքում է:
Գնացեք զավակներս: Միավորվեք աղոթքի մեջ:
Աշխատեք Ինձ հետ՝ ձեր Հոր հետ՝ օգնելու փրկել Իմ ընտանիքը:
Ձեր սիրող Հայր
Աստված Ամենաբարձրյալ

Նախազգուշացման ընթացքում նրանք, ովքեր ազատագրել են իրենք իրենց Իմ Աչքում, չեն տառապի քավարանի ցավով

Հինգշաբթի, 24 մայիսի, 2012թ, երեկոյան ժ 06:30

Երբ ժամանակը գա Նախազգուշացման համար, Իմ սիրելի աղջիկ, մի քանի նշաններ կբացահայտվեն:
Ես ասում եմ սա քեզ՝ հիշեցնելու համար Աստծո բոլոր զավակներին, որ իրենք պետք է նախապես նախապատրաստվեն:
Երկու աստղերը կբախվեն, և շատերը կվախենան:
Վախենալու ոչինչ չկա, որովհետև սա ամենամեծ ընծան է, որ Ես բերում եմ, որպեսզի ոչ մի հոգի չկորչի դժոխքի կրակների մեջ:
Հետո Իմ Խաչը կհայտնվի երկնքում, և չի լինի ոչ մի հոգի որ չկարողանա այն նկատել:
Շատերը վայր կընկնեն վախով, և երկրաշարժի պես մի ուժեղ ցնցում կզգացվի:
Հետո կգա լռությունը:
Միշտ նախապատրաստվեք այդ օրվա համար, ասես այն վաղն է լինելու:
Ազատագրում փնտրեք հիմա և բացահայտեք Ինձ ձեր մեղքերը:
Կաթոլիկները պետք է գնան խոստովանության:
Նրանք, ովքեր կաթոլիկ չեն, պետք է ասեն խաչակրաց արշավանքի աղոթք (24),որը Ես տալիս եմ աշխարհին մեղքերի ամբողջական թողության համար:
Մեղքերի ամբողջական թողության ընծան բոլոր հավատամքների Աստծո բոլոր զավակների համար է և մեծ մաքրագործում է առաջարկում: Մի մերժեք այդ ընծան: Ընդունեք այն:
Այն կաթոլիկներն, ովքեր հարցականի տակ են դնում Իմ Ընծան և նախանձով քննադատել են Իմ Ընծան, Ես նրանց ասում եմ հետևյալը:
Մի՞թե կարծում եք թե Ես չեմ հեղի այս ուխտը Աստծո բոլոր զավակների վրա: Դուք պետք է սրտով առատաձեռն լինեք և երջանիկ, որ Ես անում եմ դա: Մի՞թե կարծում եք, թե նրանց չպետք է տրվի այսպիսի մի Ընծա: Եթե այո, ապա դուք ճշմարիտ չեք սիրում Ինձ:
Խոնարհեք ձեր գլուխները և գովաբանեք Աստծուն այդ հրաշալի Ընծայի համար տրված մարդկությանը իրենց հոգիները փրկելու համար:
Այնուհետև, Նախազգուշացման ընթացքում, բոլոր նրանք, ովքեր ազատագրել են իրենց Իմ Աչքում, չեն տառապի Քավարանի ցավերով:
Նրանք, ովքեր տեսնեն իրենց մեղքերը քողազերծված իրենց առջև այնպես, ինչպես Իմ Աչքում է երևում, շոկից կցնցվեն:
Շատերի համար դժվար կլինի ընդունել թե որքան սևացած են իրենց հոգիները:
Նրանք, ովքեր կընդունեն և կզղջան, խնդրեն Ինձ ներել իրենց: Եվ Ես կներեմ:
Բայց ոմանք չեն ափսոսա և իրենց սրտում կպաշտպանեն այն վայրագությունները, որ կատարել են, ինչպես որ երևում են Իմ Աչքում: **Նրանք չեն ապաշխարի և կապտակեն Իմ դեմքին:**
Ամեն դեպքում մաքրագործման և տառապանքի կրակները կզգան բոլոր մեղավորները:
Ժամանակի երկարությունը կախված կլինի նրանց մեղքերի ծանրությունից:

Նրանք, ովքեր հեռու են քաշվում Ինձնից, ձեր աղոթքների կարիքն ունեն: Նրանց ավելի շատ ժամանակ կտրվի դեպի Ինձ ետ վերադառնալու համար և խնդրելու Ինձ՝ ներել իրենց:
Բայց այդ ժամանակը կարող է այնքան կարճ լինել ինչպես մեկ օրը, կամ այնքան երկար ինչպես մի քանի տարին:
Ոչ ոք Իմ Հորից բացի չգիտի Իմ Երկրորդ Գալուստի օրը:
Այդ երկու իրադարձությունների միջև ժամանակը այնքան էլ երկար չի լինի ինչպես կարծում եք:
Վերջապես Իմ զավակները կհասկանան այն ժամանակը, որի մեջ ապրում են և կընդունեն Ճշմարտությունը:
Նրանք, ովքեր գիտեն ճշմարտությունը հիմա և հավատում են Ինձ, դուք պարտականություն ունեք աղոթելու այն հոգիների համար, ովքեր չեն ընդունի Իմ Գթասրտությունը:
Աղջիկս, Իմ մեծագույն ցանկությունն է փրկել ողջ աշխարհը ներառյալ նրանց, ովքեր կորած են Ինձ համար:
Իմ հետևորդների բոլոր աղոթքները, ովքեր միացած են որպես մեկ ձայն, կարող են օգնել Ինձ անել այդ:
Գնացեք սիրով: Միշտ վստահեք Ինձ, քանի որ ժամանակը կարճ է, և մարդկության փրկության պլանները Իմ Հավիտենական Հոր ձեռքերում են:
Ձեր սիրող Հիսուս

Նրանք մտադիր են արտաքսել Հռոմի Պապ Բենեդիկտ XVI-ին Պետրոսի Աթոռից՝ խորամանկ միջոցներ օգտագործելու միջոցով

Շաբաթ, 26 մայիսի, 2012թ, ցերեկվա ժ 04:00

Ես ուրախ եմ, որ ետ ես եկել Ինձ մոտ: Կարևոր է Ինձ մոտիկ մնալ հիմա, աղջիկս: Ժամանակը կարճ է, և դու շատ աշխատանք ունես անելու:
Այսօր Ես խնդրում եմ Իմ հետևորդներին **սրտանց աղոթել Իմ սիրելի Երեց Բենեդիկտ XVI Պապի համար: Նա՝ Իմ Սուրբ Սպասավորը, սարսափելի հալածանքի տակ է փակ դռների ետևում Մայր Աթոռում:**
Ես նախկինում ասել եմ քեզ, որ մասոնական խմբերը, ովքեր թույնի պես բռնել են Վատիկանի ներսում, ուզում են հեռացնել Իմ Պապին:
Եվ նրանք մտադիր են արտաքսել նրան Պետրոսի Աթոռից՝ խորամանկ միջոցներ օգտագործելու միջոցով:
Նա, ինչպես Ես անցյալում ասել եմ քեզ, ստիպված կլինի փախչել, քանի որ քիչ ընտրություն կունենա:
Այդ ժամանակը կարճ է: Դուք պետք է սրտանց աղոթեք, որ նա որքան հնարավոր է երկար մնա, քանի որ **հենց որ նա հեռանա, խաբեբան՝ Կեղծ Մարգարեն, կգրավի նրա տեղը:**
Ինչպես են հիմա Իմ արցունքները հոսում երկրի վրա Իմ սիրելի Եկեղեցու համար: **Իմ այն բոլոր սրբազան սպասավորներին, ովքեր ընդունում են Իմ Սուրբ Խոսքը երբ այն տրվում է ձեզ այս ժամանակ, լսեք Ինձ հիմա:**

Դուք պետք մնաք հավատարիմ Սուրբ Պատարագին և պահեք ամենօրյա Զոհաբերությունները: Քանի որ շատ շուտով ձեզ կստիպեն մի սուտ կուլ տալ: Ամենօրյա Զոհաբերությունները՝ ի պատիվ Իմ Խաչելության, և գինու փոխվելն Իմ Արյան ու հացինը՝ Իմ Մարմնի, կփոխվեն, կշրջվեն, և Ես կանարգվեմ Կեղծ Մարգարեի կողմից ներմուծված նոր օրենքներով:
Դուք երբեք չպետք է ընդունեք որևէ բան, որը Ճշմարտությունը չէ:
Դուք երբեք չպետք է ընդունեք հերձվածությունը Իմ Մայր Աթոռի ներսից: Եթե ընդունեք, ապա ինքներդ ձեզ կհեռացնեք Ինձնից:
Ձեզանից շատերը ստիպված կլինեն գաղտնի կատարել Սուրբ Պատարագը, և դուք կարիք կունենաք խիզախության, որը կարող եք ստանալ Ինձ աղոթելու միջոցով և խնդրելով որ ձեզ ուժեղ դարձնեմ:
Փոփոխությունները կսկսվեն հենց Սուրբ Հաղորդությունից: **Շուտով ձեզ կասեն, որ Սուրբ Հաղորդությունը, Իմ Ճշմարիտ Ներկայությունը, փաստորեն այլ բան է:**
Ձեզ կասեն, որ դա այլ բան է նշանակում: Բայց դա սարսափելի սուտ է:
Սուրբ Հողորդությունն Իմ Մարմինն ու Արյունն է, որը տրվում է ձեզ թույլ տալու համար Ինձ լցնել ձեզ Իմ Սուրբ Հոգով, տալու համար ձեզ այն սնունդը, որի կարիքն ունեք ձեր հոգիների համար:
Երբ ժամանակը գա, և ձեզ Իմ Սրբազան սպասավորներ, ներկայացնեն նոր ժամանակակից մեկնաբանությունը, այդ ժամանակ կիմանաք, որ թունավորումն արդեն սկսվել է:
Ահա թե երբ նախապատրաստվելու կարիք կունենաք: Հավաքվեք միասին և պաշտպանեք Իմ Խաչելության մասին Ճշմարտությունը: Մի ընդունեք Սուրբ Պատարագի և Սուրբ Հաղորդության մասին ստերը: Քանի որ եթե ընդունեք, ապա Իմ Ներկայությունը կկորչի Աստծո բոլոր զավակների համար:
Հետևեք Ինձ: Սա ամենամեծ մարտահրավերն է, որին երբևէ ստիպված կլինեք դիմակայել, բայց Ես կտամ ձեզ շնորհները՝ զանազանելու համար Ճշմարտությունը այն սրբապիղծ կեղծիքից, որը ձեզ կխնդրեն ընդունել Իմ Սուրբ Անվամբ:
Հիմա դուք պետք է Իմ Օգնությունը խնդրեք այս խաչակրաց արշավանքի աղոթքի միջոցով (56): Այն քահանաների համար է՝ Իմ Սուրբ Հաղորդության համար պաշտպանություն փնտրելու նպատակով:

Ով սիրելի Հայր, հանուն Քո թանկագին Որդու,
Ով Զոհաբերվեց Խաչի վրա ողջ մարդկության համար,
Օգնիր ինձ Ճշմարիտ մնալ Ճշմարտության հանդեպ
Ծածկիր ինձ Քո Որդու Թանկագին Արյամբ և տուր ինձ
Շնորհները, որ շարունակեմ ծառայել Քեզ հավատով, վստահությամբ և պատվով իմ սպասավորության ընթացքում:

Երբեք ինձ թույլ մի տուր շեղվել Սուրբ Պատարագի Զոհաբերության Ճշմարիտ իմաստից, կամ Քո զավակներին Սուրբ Հաղորդությունը ներկայացնելուց:
Տուր ինձ ուժը, որ ներկայացնեմ Քեզ և սնեմ Քո հոտն այնպես, ինչպես որ պետք է կերակրվեն Քո Որդի Հիսուս Քրիստոսի՝ մարդկության Փրկչի Մարմնով, Արյամբ, Հոգով և Աստվածայնությամբ:
Ամեն:

Խնդրում եմ իմացեք, որ Ես քայլում եմ ձեզնից յուրաքանչյուրի հետ, Իմ սիրելի սրբազան սպասավորներ, ամեն օր:
Ես ձեզ վեր եմ պահում: Հենվեք Ինձ վրա, և Ես ձեզ մոտիկ կպահեմ Իմ Սուրբ Սրտին կաթոլիկ եկեղեցու համար սարսափելի տառապանքի այս ժամանակներում:
Ձեր սիրող Հիսուս

Սատանան կհամոզի ձեզ, թե Իմ պատգամները գալիս են իրենից

Կիրակի, 27 մայիսի, 2012թ, երեկոյան ժ 06:00

Աղջիկս, Իմ հետևորդներից այնքան շատերն են հարցականի տակ դնում թե ինչու են այս մարգարեություններից շատերը վախ առաջացնում իրենց սրտերում:
Շատերը հավատացած են, թե Ես վախ եմ առաջացնում: Բայց դա բացարձակապես ճիշտ չէ:
Վախը, որը հեղեղում է շատ սրտեր, այն բանի հասկացողությունն է, որ այն ինչ Ես ասում եմ ձեզ՝ ճշմարտությունն է:
Ցանկացած լավ ծնող զավակին նախազգուշացնում է կյանքի վտանգների մասին:
Երբեմն վտանգները, որոնցից ծնողը նախազգուշացնում է, կարող են վախ առաջացնել: Սակայն այդ վախը վերաբերում է մարդու կողմից պատճառվող չարին, որն առջում է:
Նույն բանը ճշմարիտ է աշխարհում չարի վերաբերյալ: Այն պատճառվում է մարդու կողմից, ում վրա իր հերթին ազդում է խաբեբան՝ Սատնան:
Աստծո կողմից մարդկային ռասային տրվող մարգարեությունները, սկզբից ի վեր, վախ է ներշնչել ոմանց սրտերում:
Չնայած դրան, այդ մարգարեությունները շատ ծիծաղ են առաջացրել այլ մասերում: Դա էր որ տեղի ունեցավ նախքան Նոյը կկառուցեր Տապանը: Մինչ նրան ծաղրում էին ծիծաղում վրան, նրանք ովքեր վախենում էին, արեցին այն, ինչ խնդրել էին իրենց: Նրանք կառուցեցին Տապանը, որ փրկեն իրենք իրենց:
Նրանք, ովքեր ծիծաղում էին, ծաղրում կամ մերժում Նոյին, ոչնչացան:
Աստծուց եկող բոլոր մարգարեությունները ներառում են նախազգուշացումներ՝ խրախուսելու համար մարդկությանը՝ նախապատրաստվել այդպիսի իրադարձություններին:
Միայն ձեր հոգիները նախապատրաստելու միջոցով է, որ կարող եք դիմանալ մարդու կողմից պատճառվող տառապանքներին որոնք սպասվում են:
Իմ այն հետևորդներին , ովքեր հարցնում են, թե ինչու կարող են Իմ պատգամները վախ առաջաացնել, Ես կասեմ հետևյալը:
Մի հավատացեք Սատանայի կողմից ձեր սրտերի մեջ ցանված ստերին, թե Աստված երբեք աշխարհին պատգամներ չի տա, որոնք վախ կառաջացնեն Իր զավակների սրտերում:
Հիմա ձեզանից շատերը, հատկապես նրանք, ովքեր սիրում են Ինձ, մի կողմ են շրջվում Իմ Սուրբ Խոսքից:
Սատանայի սիրելի խայթոցներից մեկն էլ ձեզ համոզելն է, թե Աստվածային պատգամները չեն պարունակում մարգարեություններ, որոնք վախ են առաջացնում:

Իհարկե այդպիսի պատգամները գալիս են միայն չարի՞ց:
Ինչպես է Սատանան ծիծաղում իր սեփական խորամանկ խաբեության վրա:
Սատանան կհամոզի ձեզ, թե Իմ պատգամները գալիս են իրենից, այնքան որ նա հուսահատ է համոզելու համար ձեզ, որ չհետևեք Իմ ցուցումներին:
Ձեզ, Իմ հետևորդներ, պետք է ասվի Ճշմարտությունը:
Ես պետք է նախապատրաստեմ ձեզ, իսկ դա նշանակում է ձեզ նախօրոք նախազգուշացնեմ գալիք բաների մասին միայն ձեզ պաշտպանելու համար: Ձեզ փրկելու համար:
Երբեք չլսեք այդ ստին:
Իմ պատգամները տրվում են ձեզ ողջ արարչության հանդեպ Իմ ուեցած Աստվածային Սիրուց ելնելով: Թույլ տվեք Ինձ ուղղություն տալ ձեզ, ինչպես ցանկացած բարի ծնող:
Ինձ լսելով և աղոթելու Իմ ցուցումներին հետևելով Ես կպաշտպանեմ ձեզ:
Վախն Ինձնից չի գալիս: Երբ հավատում եք Ինձ և վստահում, ապա չեք վախենում, անկախ նրանից, թե որքան չարիք կներկայացվի ձեզ մարդկության մեղքերի միջոցով:
Մի բան միայն դուք չպետք է երբեք անեք. Այն է որ չթաքնվեք և ձևացնեք, թե ամեն ինչ լավ կլինի:
Քանի որ այդպես անելով դուք հեռացնում եք աշխարհում չարի գոյությունը:
Ընդունեք, որ Սատանան գոյություն ունի: Հավատացեք, որ աղոթքը կարող է թուլացնել և կթուլացնի նրա ուժը:
Հետո ոտքի կանգնեք և պատասխանատվություն վերցրեք որպես Իմ՝ Հիսուս Քրիստոսի հետևորդ:
Երբ դեմ կանգնեք ճշմարտությանը, թույլ տվեք Ինձ առաջնորդել ձեզ, և վախը չի մտնի ձեր սրտից ներս:
Ձեր սիրող Հիսուս

Իմացեք որ Հայտնության Գրքում նշված 1,000 տարին հենց այդ է նշանակում

Երկուշաբթի, 28 մայիսի, 2012թ, երեկոյան ժ 08:45

Իմ սիրելի աղջիկ, երբ մարդիկ հարցականի տակ են դնում Սուրբ Աստվածաշնչում պարունակվող ուսուցումները, դա նորմալ մարդկային բնությունն է:
Երբ մարդիկ շրջում են Սուրբ Աստվածաշնչի ուսուցումները՝ իրենց սեփական նպատակներին հարմարեցնելու համար, դա վիրավորում է Ինձ:
Բայց երբ Իմ սրբազան սպասավորները չեղյալ են հայտարարում Իմ Սուրբ Աստվածաշնչի մասերը և մի կողմ նետում դրանք, ասես թե դրանք ոչ մի հետևանք չունեն, նրանք ուրանում են Ինձ՝ մարդու Որդուն:
Սուրբ Աստվածաշնչում պարունակվող ամեն ինչ գալիս է Իմ Հավիտենական Հորից, ով վավերացրել է յուրաքանչյուր բառ Իմ օծյալների միջոցով:
Հավատացեք, որ Աստծո Սուրբ Խոսքը պարունակվում է Իմ Հոր Գրքում, ոչ մի բառ սուտ չէ:
Ուրեմն ինչու՞ են նրանք, ովքեր հայտարարում են թե Սուրբ Աստվածաշնչում պարունակվող Ճշմարտության գիտակներ են և փորձագետներ, հարցականի տակ

դնում Իմ Սուրբ Խոսքը մինչ Ես ներկայացնում եմ այն ձեզ այս սուրբ պատգամների մեջ:
Իմ Ճշմարտությունը տրվում է ձեզ հիմա մեկ անգամ ևս թարմացնելու համար ձեր հիշողությունը, հիշեցնելու համար ձեզ նրանում պարունակվող ուսուցումները:
Երկրի վրա գտնվող Իմ զավակներին. Իմացեք, որ **Դանիելի Գրքում** և **Հայտնության Գրքում** պարունակվող մարգարեությունները **դեռևս պետք է տեղի ունենան:**
Իմացեք, որ Հայտնության Գրքում նշված 1,000 տարին հենց այդ է նշանակում:
Եթե դա նպատակ ունենար լինել ինչ-որ ուրիշ բան, ապա դրան կտրվեր ուրիշ ժամանակ:
Իմ եկեղեցին՝ կաթոլիկ եկեղեցին, չի հռչակել իր հավատքը, որովհետև նրանք դեռևս չեն արել դա:
Իմ մնացորդ եկեղեցին՝ երկրի վրա կաթոլիկ եկեղեցու մնացած բեղիկները, կհասկանան երկրի վրա Խաղաղության Իմ Նոր Դարջանի ճշմարիտ իմաստը:
Դուք վերջին ժամանակներում եք, բայց երկիրը կնորանա:
Ես կոչ եմ անում ձեզ բոլորիդ Իմ սրբազան սպասավորներ: Իմ ձայնը խռպոտ է, մինչ Ես խնդրում եմ ձեզ պատասխանել Երկնքից եկող Իմ Սուրբ Կանչին:
Ես՝ ձեր սիրող Փրկիչը, ուղարկել եմ շատ տեսանողների ձեզ մոտ մինչև հիմա: Նրանք օգնել են բացելու ձեր մտքերը այն իրադարձությունների հանդեպ, որոնք դեռևս պետք է գան:
Ես սպասել եմ մինչև հիմա, որ հայտարարեմ աշխարհին վերջին հայտնությունները:
Ես հիմա ուղարկում եմ Իմ վերջին պատգամատարին՝ Մարիա Աստվածային Գթասրտությանը, յոթերորդ պատգամատարին, նախապատրաստելու համար վերջին գլուխը, մինչ այն բացահայտվում է ձեզ:
Իմ ձայնը նման է որոտի: Ինձ կշարունակեն լսել ողջ երկրով մեկ: Այն չի դադարի մինչև այն օրը, երբ Ես կգամ դատելու:
Դուք կարող եք հիմա Ինձ չլսել: Ձեզնից շատերը բաց կթողնեն Իմ Խոսքը մի ամբարտավանությամբ, որն Ինձ խորապես վիրավորում է:
Մյուսները, վախից կանտեսեն Ինձ, քանի որ այդ ձևով ավելի հեշտ է: Բայց շուտով փոփոխությունները, որոնց մասին Ես խոսում եմ, տեղի կունենան: Այդ ժամանակ Ճշմարտությունը կսկսի ծագել ձեզ վրա:
Ես կոչ եմ անում հիմա ձեզ և ասում եմ հետևյալը: Ես սպասում եմ ձեր պատասխանին, անկախ նրանից դա հիմա կլինի, թե ապագայում:
Ես սպասում եմ: Ես կշարունակեմ, համբերատար կերպով, մինչև այն օրը երբ վազելով կգաք Ինձ մոտ՝ փնտրելով Իմ Պաշտպանությունը:
Ես երբեք չեմ հրաժարվում Իմ սրբազան սպասավորներից, նրանց, ում Ես առաջինը կանչեցի:
Հիշու՞մ եք, երբ Ես առաջին անգամ կանչեցի ձեզ: Դուք զգացիք թե ինչպես է Իմ ձայնը խոսում ձեր հոգու հետ՝ ձեզ կոչ անելով միավորվել Ինձ հետ միության մեջ: Դուք կարո՞ղ եք լսել Ինձ հիմա:
Խնդրեք Ինձ, որ հիմա ձեզ բացահայտեմ, որ այդ Ես եմ՝ ձեր սիրող Հիսուսը, որ խնդրում եմ ձեզ գալ, բարձրանալ և հետևել Ինձ դեպի Հավիտենական Կյանք տանող այս վերջին դժվարին ճամփորդության մեջ: Մի վախեցեք Իմ Կանչից: Վստահեք Ինձ և ասեք այս աղոթքը՝ խնդրելով Ինձ որ թույլ տամ լսեք Իմ կանչը:
Խաչակրաց արշավանքի աղոթք (57) աղոթք հոգևորականության համար. Հիսուս, թույլ տուր ինձ լսել Քո կանչը

Ով իմ սիրելի Հիսուս
Բաց իմ ականջները Քո ձայնի հնչյունի համար
Բաց իմ սիրտը Քո սիրող կանչի համար
Լցրու իմ հոգին Քո Սուրբ Հոգով
Որպեսզի կարողանամ ճանաչել Քեզ այս անգամ:

Ես առաջարկում եմ Քեզ իմ խոնարհ հավատարմությունը
Այն ամենի համար, ինչ Դու խնդրում ես ինձ
Օգնիր ինձ զանազանել ճշմարտությունը, բարձրանալ, պատախանել և
Հետևել Քո ձայնին, որպեսզի կարողանամ օգնել Քեզ փրկելու
Ողջ մարդկության հոգիները:

Քո կամքն իմ հրամանն է
Տուր ինձ արիությունը թույլ տալու Քեզ առաջնորդել ինձ
Որպեսզի կարողանամ վերցնել այն սպառազինությունը, որն անհրաժեշտ է
առաջնորդելու համար Քո Եկեղեցին դեպի Քո Նոր Թագավորություն:
Ամեն:

Հիշեք, Ես՝ Հիսուս Քրիստոսը, երբեք թույլ չեմ տա Իմ սրբազան սպասավորներին շեղվել Ճշմարտության ճանապարհից: Ես կկանգնեմ յուրաքանչյուր անկյունում, յուրաքանչյուր ճանապարհի վրա և ցույց կտամ ձեզ ճիշտ ուղղությունը:
Սա երբեմն ձեզ անիրագործելի կթվա: Դուք կարող է շփոթվեք: Դուք կարող է չցանկանաք լսել Ճշմարտությունը: Դուք կարող է վախենաք: Բայց իմացեք սա:
Ես միշտ կսիրեմ ձեզ: Ես միշտ կլինեմ ձեր կողքին:
Ես երբեք չեմ լքի ձեզ:
Ձեր սիրող Հիսուս

Աղոթքը կարող է կասեցնել այն դաժանությունները, որոնք պլանավորվում են դրդելու միջուկային ռումբերի օգտագործումը

Երեքշաբթի, 29 մայիսի, 2012թ, ցերեկվա ժ 05:42

Իմ սիրելի աղջիկ, Իմ մարգարեները, Իմ պատգամատարներն ու բոլոր ճշմարիտ տեսանողներն աշխարհում միանում են ոգով հռչակելու համար Իմ Սուրբ Խոսքը այս ժամանակ:
Նրանց, ովքեր ընտրվել են այն դժվարին առաքելության համար, որ ապահովեն ողջ մարդկության հոգիների նախապատրաստումն Իմ Երկրորդ Գալուստին, նրանց հրահանգ է տրվում կոչ անել աշխարհին:
Շուտով նրանք կոչ կանեն հրատապ աղոթքի օգնելու համար նրանց, ովքեր կտառապեն գալիք պատերազմներում:
Ժամանակը մոտ է, որ պատերազմները պայթեն, և շատ անմեղ հոգիներ զոհեր կլինեն Աստծո զավակների դեմ ուղղված այդ ատելությամբ լի ահաբեկչության մեջ:

Շատերը կսփռվեն տարբեր ուղղություններով այդ պատերազմների ընթացքում, և շատ շփոթություն գոյություն կունենա Միջին Արևելքում:
Այնքան շատ փոքր պատերազմներ կսկսվեն:
Այնքան շատ կողմեր՝ սկզբում բոլոր ուղղություններով ցրված՝կմիավորվեն միայն մի փոքր թվով կողմերի մեջ:
Հետո ավելի մեծ բանակները կներգրավվեն՝ շատ ազգեր միանալով դրան:
Ինչպես են Իմ արցունքներնը ընկնում այս սարսափելի չարիքի համար, որն առաջնորդվում է Սատանայի ազդեցությամբ, ով ցանկանում է սպանել որքան հնարավոր է շատ մարդկանց և որքան հնարավոր է արագորեն:
Աղոթեք, որ այդ պատերազմները թուլանան:
Աղոթեք, որ Աստծո զավակներն իրենց աղոթքներով կարողանան կասեցնել այն վայրագությունները, որոնք պլանավորվում են ստիպելու համար միջուկային ռումբերի օգտագործումը:
Իմ սիրելի աղջիկ, Սատանան կանի ուժը ներածի չափ ամեն ինչ այս ժամանակ, որ խրախուսի կաթոլիկ եկեղեցուն մերժել քեզ և այս պատգամները հայտարարել որպես հերձվածություն:
Դու պետք է անտեսես այդ հարձակումները: Բոլոր նրանք, ովքեր հետևում են Իմ ուսուցումներին պետք է հետևեն միայն իրենց սրտերին, քանի որ նրանց համար հեշտ կլինի զանազանել ճշմարտությունը:
Եթե Իմ մարգարեներին Երկնքից շնորհներ տրված չլինեին այդպիսի հալածանքների դիմանալու համար, ապա Իմ Սուրբ Խոսքը, Իմ հրահագնենը՝ նախապատրաստելու Աստծո բոլոր զավակներին Իմ Երկրորդ Գալուստի համար, չէր լսվի:
Եթե չլինեին Աստծո բոլոր մարգարեների ու Աստծո պատգամատարների համառ պնդումները ժամանակների սկզբից ի վեր, ապա Աստծո զավակներն անգրագետ կմնային:
Հենց որ ձեզ տրվի գիտելիքը, Իմ թանկագին հետևորդներ, դուք երբեք չպետք է վախենաք, քանի որ կհետևեք Հավիտենական Կյանքի ուղուն: Ցանկացած այլ ուղի, անկախ փառապանծ բայց անարժեք գայթակղություններից, որը ձեզ կքաշի դեպի աշխարհիկ թակարդները, ձեզ չի բերի Ինձ մոտ:
Քանի որ եթե և երբ Իմ Սուրբ Հաղորդության մասին ստերը սկսեն դուրս գալ, դուք պետք է հեռանաք:
Աղոթեք ուժի, վճռականության և արիության համար որ հետևեք Ինձ Փրկության տանող վերջնական Ուղիով:

Ես մեկ անգամ ևս վերապրում եմ Իմ Տառապանքը պարտեզում և կրկնակի եմ զգում տառապանքի ցավը

Չորեքշաբթի, 30 մայիսի, 2012թ, ցերեկվա ժ 03:30

Իմ սիրելի աղջիկ, հիմա կուժեղանա այն տանջանքը, որը պարտադրվում է քեզ նրանց կողմից, ովքեր զուրկ են ճշմարիտ խոնարհությունից, բայց ձևացնում են թե խոսում են Իմ Անունից:
Ոչ մի այլ ձայնի մի լսիր, միայն՝ Իմը: Մի ներգրավվիր կամ պատասխանիր նրանց, ովքեր վիրավորում են Ինձ:

Նրանք թույլ են տվել, որ մարդկային հպարտությունը խոչընդոտի Ինձ, իսկ այնուհետև, ոչ միայն դա բավական չէ, նրանք հետապնդում են Ինձ:
Իմ Երկրորդ Գալուսը նման կլինի այն դեպքերին, որոնք տեղի ունեցան առաջին անգամ երկրի վրա Իմ գտնվելու ժամանակ:
Իմ Սուրբ Խոսքը հարցականի տակ կդրվի, կքննադատվի, կանտեսվի, իսկ հետո՝ կմերժվի:
Առաջինն Ինձ կմերժեն Իմ յուրայինները, նրանք, ովքեր ամենաշատն են Ինձ սիրում: Նրանք շարքով կկանգնեն առջևում՝ նետելու համար առաջին քարը:
Ես մեկ անգամ ևս վերապրում եմ Իմ տառապանքը պարտեզում և կրկնակի եմ զգում տառապանքի ցավը:
Ես հոգևարքի մեջ էի մարդկության մեղքերի համար, ոչ միայն նրանց, ովքեր ապրում էին այդ ժամանակ, այլև նրանց, ովքեր այսօր մերժում են Ինձ: Նրանք, ովքեր մերժում են Ինձ այսօր, ամենաշատն են Ինձ վիրավորում, քանի որ Ես մեռա իրենց մեղքերի համար: Նրանք ոչինչ չեն սովորել:
Նրանք, ովքեր ծաղրեցին Ինձ և Իմ Աչքը պատռեցին Փշե Պսակի ամենասուր փշով, երկրի վրա Իմ Եկեղեցու ներկայացուցիչներն են:

Նրանք չեն ընդունի Իմ Երկրորդ Գալուսը, կամ այն նախազգուշացումները, որոնք Ես հիմա բացահայտում եմ իրենց:
Իմ շուրթերից արտասանված յուրաքանչյուր բառ կլանվում է խոնարհ հոգիների կողմից, ինչպես սոված երեխաների:
Չնայած դրան, նրանք, ովքեր սնվում են Իմ Ուսուցումների Ճշմարտության գիտելիքով, շրջում են իրենց գլուխները և նայում հակառակ ուղղությամբ:
Խոնարհությունն այլևս ներկա չէ Իմ շատ հետևորդների հոգիներում, ուստի նրանք ի վիճակի չեն լինի օգուտ ստանալ Իմ յուրահատուկ Շնորհներից:
Մինչև փոքր չդառնաք Աստծո աչքում, չեք կարողանա լսել Ինձ:
Մինչև չհրաժարվեք հպարտությունից և ամբարտավանությունից, չեք զգա Սուրբ Հոգու զորությունը:
Երբ դուք մերժում եք Ինձ այսօր, դուք առաջին մեխն եք խփում Իմ դաստակին:
Երբ դուք, Իմ սրբազան սպասավորներ, մերժում եք Իմ Սուրբ Խոսքը, որ տրվում է ձեզ հիմա, **դուք երկրորդ մեխն եք խփում Իմ մյուս դաստակին:**
Այն խեղճ հոգիները, ովքեր հետաքրքրված չեն Իմ Ուսուցումներով կամ Փրկությամբ, որը Ես տվեցի աշխարհին Խաչի վրա Իմ Մահվամբ, նրանք չունեն ոչ մեկը, որ ուղղություն տա իրենց:
Նրանք զոհերն են այստեղ: Նրանց չեն առաջնորդում դեպի Ինձ: Նրանց մերժվում է Իմ Երկրորդ Գալուստի համար նախապատրաստվելու հնարավորությունը:
Հիմա Ես կոչ եմ անում Իմ բոլոր հետևորդներին նախապատրաստվելու: Մարտը հավատացյալների միջև կսկսվի շուտով: Մի կեսը ոչ միայն կմերժի այս պատգամները, այլև կփորձի արգելք լինել դրանց;
Մյուս կեսը կօգտագործի դրանք՝ այլոց դարձի բերելու համար:
Պարզ, կորած հոգիները, ովքեր ընդհանրապես Ինձ չեն ճանաչում, կճանաչեն Ինձ հենց որ Ես Ճշմարտությունը բացահայտեմ նրանց Նախազգուշացման ընթացքում:
Նրանց համար ավելի հեշտ կլինի տեսնել ճշմարտությունը, քան նրանց ովքեր ասում են, թե սիրում են Ինձ, բայց հիմա մերժում են Ինձ:

Ահա թե ինչու դուք պետք է աղոթեք շնորհների համար, որ թույլ տան ձեզ տեսնելու Ինձ, լսելու Ինձ և թույլ տալու Ինձ որ նախապատրաստեմ ձեզ Իմ Երկրորդ Գալուստի ժամանակ:
Երբեք չհավատաք, որ Ինձ հետևելը, հատկապես այս վերջին ժամանակներում, հեշտ կլինի:
Քանի որ այդ ժամանակ Իմ Սուրբ Խոսքին տրվող լուռ մեծարանքը բավական չի լինի:
Դուք կլինեք ինչպես նոր զորակոչվածներ Իմ բանակում: Դուք կարիք կունենաք մարզել, նորացնել ձեր հոգիները և գալ Ինձ մոտ խորհուրդների միջոցով, նախքան բավականին ուժեզ և քաջ կլինեք Իմ Սուրբ Խոսքը տարածելու համար:
Իմ խաչակրաց արշավանքի աղոթքները տարածելը կլինի ձեր առաջին առաջադրանքը:
Դուք, Իմ բանակ, կկատարեք երկրի վրա երբևէ տեղի ունեցած Իմ Սուրբ Առաքելության ամենամեծ խաչակրաց արշավանքը: Դուք կսկսեք փոքր թվով, բայց կաճեք մինչև 20 միլիոն:
Իմ մնացորդ եկեղեցու աղոթքներն ու տառապանքը բավարար կարող են լինել՝ փրկելու համար ողջ մարդկությունը: Երբեք մի մոռացեք, որ ձեր աղոթքները կարող են փրկել նույնիսկ ամենածանր մեղավորների հոգիները, այնքան որ զորեղ է աղոթքը:
Ուստի պատրաստվեք միասին հավաքվելու: Լավ նախապատրաստվեք, որովհետև ջանք կթափվի ձեզ կասեցնելու համար: Ընդունեք այն մեղադրական վիրավորանքները, որոնք կնետվեն ձեզ վրա:
Իմացեք, որ ձեզ կներկայացնեն ցանկացած տիպի փաստակ՝ ձեզ ձեր առաքելության մեջ կասեցնելու համար: Բայց իմացեք, որ Ես առաջնորդում եմ ձեզ, ուղղություն տալիս և ուժեղ դարձնում:
Իմացեք նաև որ դուք, Իմ բանակ, պատասխանատու կլինեք միլիոնավոր հոգիների փրկության համար: Հոգիներ, ովքեր ոչ մի հույս չէին ունենա:
Թող Իմ սերը դիպչի ձեր հոգուն և կապի ձեզ իրար որպես մեկ Ինձ հետ՝ ձեր Հիսուսի հետ միության մեջ:
Թույլ տվեք Ինձ ծածկել ձեզ Իմ Թանկագին Արյամբ և հեղել Իմ Ընծաները՝ օգնելու համար ձեզ որ մնաք Ինձ հավատարին, այնպես որ անկախ նրանից, թե որքան ուժեղ կլինի գայթակղությունը, դուք երբեք չմերժեք ձեզ ուղղված Իմ կոչը հիմա:
Ես օրհնում եմ ձեզ բոլորիդ Իմ ուժեղ Բանակ:
Ես կառաջնորդեմ ձեզ դեպի Խաղաղության Իմ Նոր Դարաշրջանն արվող ձեր յուրաքանչյուր քայլափոխի:
Ձեր սիրող Փրկիչ
Ազատարար մարդկության
Հիսուս Քրիստոս

Կույս Մարիամ. Հունիսը դարձի խաչակրաց արշավանքի ամիս

Հինգշաբթի, 31 մայիսի, 2012թ, երեկոյան ժ 09:00

Զավակս, Սատանայի և նրա կողմից թունավորված հոգիների կողմից ամեն ջանք գործադրվում է թուլացնելու համար Իմ Որդու Ամենասուրբ Խոսքը:

Միշտ հիշեք, որ Սատանան սերմանում է կասկածների առաջին սերմերը այդ ընտրյալ հոգիների սրտերի մեջ:
Ամենավատ արհամարհանքը կհեղվի այս Սուրբ Պատգամների վրա նրանց կողմից, ովքեր մտերիմ միության մեջ են Իմ թանկագին Որդու հետ:
Երբ Սատանան անում է դա, նա հոգիներ է հաղթում:
Թույլ մի տուր նրան անել դա, զավակս: Հեռացիր և մի ներգրավվիր նրա հետ /խոսակցության մեջ/:
Իմ Որդին երբեք չպաշտպանեց Իր Սուրբ Խոսքը, ոչ էլ դու պետք է տեղի տաս այդ գայթակղությանը:
Սատանայական ազդեցության նժարն ավելանում է և տարածվում աշխարհով մեկ:
Իմ խեղճ զավակներն այնքան են տառապում, և Ես վշտի արցունքներ եմ հեղում, երբ տեսնում եմ նրանց սարսափն ու վիշտը:
Աղոթեք զավակներս խաղաղության համար այս ժամանակ, որպեսզի Աստծո զավակներն ամենուրեք դառնան դեպի Իմ Որդին ուժ ստանալու համար:
Մեր աստվածային միջամտությունը, տրված ձեր աղոթքների միջոցով տրվող շնորհներով, կարող են թեթևացնել ձեր ցավն ու տառապանքը:
Իմ Որդին տենչում է, որ հոգիները դառնան դեպի Իրեն, քանի որ միայն Նա կարող է տալ նրանց այն սփոփանքը, որի կարիքն ունեն: Ուրիշ ոչ մի բան չի թեթևացնի այն տառապանքները, որոնք հիմա դուք կրում եք:
Ես կոչ եմ անում ձեզ, զավակներս, նվիրաբերել հունիս ամիսը մարդկության դարձին ապահովել որ նրանք փրկություն փնտրեն:
Անվանեք այս ամիսը խաչակրաց արշավանքի ամիս դարձի համար և աղոթեք ինչպես մեկ՝ աղոթախմբերի միջոցով ողջ աշխարհով մեկ:
Ահա դարձի համար խաչակրաց արշավանքի աղոքը.

Խաչակրաց արշավանքի աղոթ (58) դարձի համար խաչակրաց արշավանքի աղոթք

Ով սիրելի Հիսուս ես կոչ եմ անում Քեզ գրկել
Աստծո բոլոր զավակներին և ծածկել նրանց
Քո Թանկագին Արյամբ
Թող Քո Արյան յուրաքանչյուր կաթիլ ծածկի
Ամեն մի հոգու՝ պաշտպանելու համար նրան չարից
Բաց արա բոլորի սրտերը՝ հատկապես կարծրացած հոգիների
և նրանց, ովքեր ճանաչում են Քեզ, բայց կեղտոտված են
հպարտության մեղքով, որ ծնկի իջնեն և խնդրեն, որ
Քո Սիրո լույսը ողողի իրենց հոգիները:

Բաց արա նրանց աչքերը, որ տեսնեն Ճշմարտությունը, որպեսզի
Քո Աստվածային Գթասրության արշալույսը ներքև հեղվի նրանց վրա, որպեսզի
նրանք ծածկվեն Քո Գթասրտության Ճառագայթներով:

Դարձի բեր բոլոր հոգիներին այն շնորհների միջոցով, որոնք ես հիմա խնդրում եմ
Քեզնից սիրելի Հիսուս (նշեք անձնական նպատակը)

Ես Քեզնից Գթասրտություն եմ աղերսում և առաջարկում եմ Քեզ
Պահեցողության այս ընծան շաբաթական մեկ օր հունիս ամսվա ընթացքում

Ի քավություն բոլոր մեղքերի:
Ամեն:

Զավակներս, դուք պետք է պահեցողություն անեք շաբաթական մեկ օր հունիս ամսվա ընթացքում:
Դուք պետք է աղոթեք Իմ Վարդարանն ու Աստվածային Գթասրտության աղոթքն ամեն օր:
Այդ անելով, զավակներս, դուք միլիոնավոր հոգիներ կփրկեք Իմ Որդի Հիսուս Քրիստոսի Գթասրտության միջոցով:
Ձեր սիրող Մայր
Մայր Փրկության